# «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  ՆԵՂՈՑԻ ԱՐԹՈՒՐ ԲԵԳՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

## 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



## Բովանդակություն

Ներածություն
1. Դպրոցի գործունեության մասին
2. Իրավիճակի վերլուծություն
2. 1. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները
2. 2. Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները
2. 3. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը
2.4. Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը
2.5. Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, դրա ուժեղ կողմերը և թերությունները
3. Նպատակներ և խնդիրներ, դրանց իրականացման գործողություններ, ժամկետներ, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, հնարավոր ռիսկեր և դրանց կանխման գործողություններ
4. Գործընթացների վերահսկաման մեխանիզմներ
5. Հավելված

# Ներածություն

ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կազմելիս առաջնորդվել ենք  վերջին 3 տարիների  դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունների վերլուծությամբ, 2019-2024 թթ. -ի զարգացման ծրագրով և նրանում կատարած փոփոխություններով, տարբեր կառույցների կողմից կատարած ստուգումի արդյունքներով: Գնահատել ենք կազմակերպության ուժեղ ու թույլ կողմերը, ունեցած ձեռքբերումները և առկա խնդիրները: Այս ամենն ընդհանրացնելով՝  այս ծրագրում հստակեցրել ենք նպատակները և խնդիրները, ուղենշել դրանց հասնելու ուղիները, սահմանել պատասխանատուներին, հստակեցնել աշխատանքային ժամկետները, դուրս ենք բերել ծրագրի իրականացման ռիսկերը:

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թ. -ի փետրվարի 8-ի N 09-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ծրագրի իրագործման ընթացքում  հաստատությունն իր բոլոր գործողությունները իրականացնելու է հիմք ընդունելով.

- ՀՀ Սահմանադրությունը,
- ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը,
- ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիրը,
- «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքը,
- Դպրոցի կանոնադրությունը,
- «Հանրակրթության մասին»  օրենքը,
- «Կրթության մասին»  օրենքը,
- «Երեխայի իրավունքների մասին» օրենքը,
- «Գնումների  մասին» օրենքը,
- «Լեզվի մասին» օրենքը,
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը,
- ՀՀ աշխատանքային օրենսգիրքը,
- ներքին իրավական և նորմատիվ այլ փաստաթղթեր:

## 1. Դպրոցի գործունեության մասին

ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 1992 թ.-ին՝ որպես դպրոց-մանկապարտեզ, որտեղ ի սկզբանե գործել է 1-ից մինչև 4-րդ դասարանը: Հետագայում դպրոցը դարձել է 8-ամյա, իսկ 2003 թ.-ին, կառավարության թիվ 1392-Ն որոշմամբ, դարձել է հիմնական: Դպրոցի շենքը ի սկզբանե կիսավեր, խախուտ կառույց էր գյուղի ծայրին: 1999 թ.-ին՝ Հունաստանի հայ համայնքի բարեգործության շնորհիվ, դպրոցի համար գնվել է քարակերտ նոր շենք: 2013 թ.-ին դպրոցն անվանակոչվել է Նեղոց գյուղի բնակիչ Արթուր Բեգջանյանի անունով, ով հերոսաբար զոհվել է Ղարաբաղյան ազատամարտի ժամանակ: Դպրոցը երկհարկանի է, ոչ տիպային, 430,5 $մ^2$ տարածքով և 0,3 հա բակային տարածքով: 2012 թ.-ից դպրոցում գործում է դպրոցահեն նախակրթարան, որը համապատասխան լիցենզավորում ստացել է 2017 թ.-ին: Նախակրթարանի գործունեության սկզբից առ այսօր այնտեղ սովորել է 80 սան: Դպրոցում սովորող աշակերտների առավելագույն թիվը եղել է 113 (1997 թ.): Հետագայում այդ թիվն անընդհատ նվազել է, այժմ դպրոցում սովորում են 67 աշակերտ և 4 սան: Դպրոցը համալրված է որակյալ մանկավարժական կադրերով՝ բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչներ, և, ուսուցչի բացակայությամբ պայմանավորված չդասավանդվող կամ հեռավար դասավանդվող առարկաներ չկան: Չնայած նրան, որ գյուղը փոքր է և հիմնականում բնակեցված է տարեցներով, վերջին 6 տարիների ընթացքում աշակերտների թիվն աճել է և եթե 2013թ.-ին դպրոցում սովորել է 28 աշակերտ, ապա այդ թիվը հիմա 67-ն է:



## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ  ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ  ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

| Նախա-կրթարան | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 3 | 6 | 8 | 5 | 11 | 10 | 11 | 6 | 7 |




Դա պայմանավորված է վերջին տարիներին դպրոցի ակտիվ գործունեությամբ, քանի որ դպրոց հաճախում են նաև հարակից  բնակավայրերի երեխաները: Դպրոցը հիմնականում բարեկարգ է, դասասենյակները վերանորոգված են և պատշաճ կահավորված: 2021 թ.-ից դպրոցը ջեռուցվում է անհատական ջեռուցման համակարգով (գազով), ունի շուրջօրյա ջրամատակարարում՝ տաք և սառը ջրի առկայությամբ: Դպրոցի 1-ին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ:

Համաձայն ՀՀ ԿԳ  նախարարի տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- Տարրական հանրակրթական ծրագիր - 60 սահմանային տեղով,
  Սերիա Ա N 0483, 30.07.2010 թ.
- Հիմնական հանրակրթական ծրագիր – 90 սահմանային տեղով,
  Սերիա Ա N 0473, 30.07.2010 թ.
- Նախադպրոցական կրթական ծրագիրր – 20 սահմանային տեղով,
  Սերիա Ա N 0324, 08.08.2017 թ.

Իրավաբանական անձանց պետռեգիստրում գրանցված է 24.01.2003 թ.-ին, գրանցման համարը – 96.210.00653:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է Լոռու մարզպետի 23.08.2017 թ.-ի թիվ 253-Ա որոշմամբ:

Կազմաիրավական ձևը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ ոչ առևտրային

ՀՎՀՀ- 06604776

Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Նեղոց, Թբիլիսյան խճուղի 6

Շենքի կառուցապատման տարեթիվը՝ 1988թ.

Դպրոցի պաշտոնական կայքը՝ http://neghoc.schoolsite.am

Դպրոցի էլեկտրոնային հասցեն՝ **neghoc@schools.am**

Սոցիալական հարթակը՝ **Նեղոցի հիմնական դպրոց**

Դպրոցը ըստ ԿԳՄՍ նախարարի հրամանի ( թիվ 1790-Ա/2, 11.09.2023 թ.) ներառվել է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում: Ինչը նախատեսում է, որ սահմանված ժամկետում (2026-2028թթ.) Նեղոցի հիմնական դպրոցը պետք է միավորվի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի հետ:

**Խորհրդակցական մարմիններ են.**

Մանկավարժական խորհուրդը

Ծնողական խորհուրդը

Աշակերտական խորհուրդը

Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:

**Դպրոցի կառավարման խորհուրդը** միացյալ է (Նեղոցի հ/դ, Ջիլիզայի մ/դ, Շամլուղի մ/դ), կազմված է 19 անդամներից:

**Մանկավարժական խորհուրդ –** Դպրոցի 19 մանկավարժներն էլ ընդգրկված են մանկավարժական խորհրդի կազմում: Մանկավարժական խորհուրդը քննարկում է դպրոցի կանոնադրությամբ և օրենքներով իրեն վերապահված հարցերը՝ առավելապես ուսումնադաստիարակչական և չափորոշչային հարցերին վերաբերվող, ԿԱՊԿՈՒ աշակերտներին, կրթության որակին առնչվող հարցեր: Խորհուրդն իրականացնում է ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված գործառույթներ:

**Ծնողական խորհուրդը** – Ձևավորվում է սահմանված կարգով, այն բաղկացած է 9 անդամից: Ծնողական խորհուրդը տնօրենին կամ մանկավարժական խորհրդին է ներկայացնում առաջարկություններ՝ կրթադաստիարակչական հարցերի շուրջ:

Հրավիրում է դասարանական և համադպրոցական ժողովներ: Ճիշտ համագործակցության ընթացքում ձևավորվում են սովորողների դաստիարակության միասնական պահանջներ: Մեծ աշխատանքներ է տանում արտադասարանական և արտադպրոցական կրթության կազմակերպման գործում:

**Աշակերտական խորհուրդը -** ունի ինքնակառավարման լիազորություններ և ինքնավարության լիազորություններ: Պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ, քննարկումներ, հանդես է գալիս առաջարկություններով: Դպրոցը խթանում է նրանց նախաձեռնությունները՝ զարգացնելով կազմակերպչական և ստեղծագործական կարողություններ:

**Առարկայական մեթոդական միավորումները** նույնպես ձևավորվում են հաստատության կանոնադրության համաձայն: Դպրոցում կան 3 մեթոդական միավորում՝

- Տարրական կրթության
- Հումանիտար առարկաների
- Բնագիտական առարկաների:

Հատկապես այս նոր չափորոշչային պահանջներով ուսուցումը կազմակերպելու համար շատ կարևոր է առարկայական մասնախմբերի գործունեությունը: Արդյունքում ուսուցիչները ստանում են մեթոդական աջակցություն, կատարում փորձի փոխանակում, տեղեկանում նորարարությունների մասին:

**Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր-** ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերի ցանկը: Դպրոցը կիրառում և պահպանում է իրավական ակտերի պահանջները, անհրաժեշտությունից ելնելով՝ առանձնահատկությունների հաշվառմամբ, նորմատիվ իրավական ակտերով վերապահված լիազորությունների շրջանակում մշակվում են այլ համապատասխան փաստաթղթեր (ակտեր): Դպրոցի կանոնադրության, աշակերտական և աշխատողների ներքին կարգապահական կանոնների պահանջները հասանելի են աշակերտներին և աշխատողներին (կարգապահական կանոնները փակցված են դպրոցի միջանցքում): Ներկայումս ժամանակի պահանջ է դարձել փաստաթղթաշրջանառությունը հնարավորինս դարձնել էլեկտրոնային և դպրոցում տարեցտարի ավելանում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը: Դրանցից են.

- Աշխատողների էլեկտրոնային հրամապանակ
- Էլեկտրոնային դասամատյան
- Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
- Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
- Էլեկտրոնային հաստիքացուցակ
- Տարիֆիկացիոն մատյան
- Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային եղանակով
- Տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով:

**Թղթային տարբերակով վարվում և գործածվում են հետևյալ փաստաթղթերը**.

- Սովորողների շարժի մատյան
- Ուսուցչի բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյան
- Հաստատության սովորողների հրամանագիրք
- Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
- Ծնողական խորհրդի արձանագրությունների մատյան
- Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան
- Մեթոդական միավորումների արձանագրությունների մատյաններ
- Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան:

## Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին

Այժմ, երբ կրթական քաղաքականությունը համակարգային մեծ փոփոխություններ է կրում, զարգացման ծրագրի առանցքային մասը պետք է ուղղված լինի այդ փոփոխությունների իրականացմանը: Այսօր գիտելիք ունենալուց բացի շատ արդիական է, թե ինչպես կարող ես օգտագործել այդ գիտելիքները՝ դառնալով մրցունակ, ճկուն և արագ կողմնորոշվող: Այս կրթական համակարգային փոփոխություններում շեշտը պետք է դրվի կարողությունների զարգացման վրա, նույնիսկ նվազագույն գիտելիք ունենալու դեպքում պետք է կարողանալ այն ճիշտ կիրառել և դրանից արդյունք ստանալ: Մեր վարած կրթական քաղաքականությունից է կախված, թե ինչպիսին կլինեն մեր վաղվա քաղաքացիները: Մեր պետությանն անհրաժեշտ են վերլուծական մտածողությամբ, գիտելիքը ճիշտ օգտագործող,

մրցունակ քաղաքացիներ, և հենց այս ամենին են միտված այս նոր չափորոշչային փոփոխությունները, որոնք թույլ կտան ձևավորել վերը նշված քաղաքացուն:

Մենք այս կրթական քաղաքականության փոփոխության մեջ կարևորում ենք.

1) Նախագծային աշխատանքի ներմուծումը դպրոց, որի հիմնական նպատակն է աշակերտներին դեռևս վաղ տարիքից սովորեցնել, թե ինչպես կարելի է ստացած գիտելիքները կիրառել գործնականում, վերլուծություններ կատարել, ունենալ ապագայի տեսլական, նպատակ և ընտրել այդ նպատակին հասնելու ճիշտ գործիքակազմ: Նեղոցի հիմնական դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում նախագծային աշխատանքների բազմազանությանը՝ ընտրելով ամենատարբեր ուղղվածություններ:

2) Ուսումնական խմբակների ներդրումը հանրակրթության ոլորտում, որը նույնպես առանցքային դեր է կատարում: Վաղ տարիքից երեխաները սովորում են տարբերակել իրենց նախասիրությունները և զարգացնել դրանք հենց խմբակների միջոցով: Բազմաբնույթ խմբակների առկայությունը թույլ կտա աշակերտին բացահայտելու իր ներուժը և ճիշտ զարգացնելու այն:

3) Համայնքի կարիքներին համապատասխանությունը կարևոր խնդիրներից է, քանի որ այսօրվա աշակերտը՝ այդ համայնքի բնակիչը, պետք է հստակ իմանա, թե ինչպես, համայնքում ապրելով, ճիշտ ինտեգրվի համայնքի կյանքին և արդյունավետ ռեսուրսներ ունենա: Նեղոցի հիմնական դպրոցը, լինելով գյուղական դպրոց, ամեն տարի վեր է հանում այդ համայնքի կրթական կարիքները և ուղենշում անելիքը: Վերջին 2 տարիների ընթացքում աշակերտներին սովորեցնում ենք գուղատնտեսությամբ զբաղվելու ճիշտ և գրագետ ձևերը, որը հեռանկարային է համայնքի համար: Արդեն 2 տարի է մասնակցում ենք «Հայաստանի լավագույն դպրոցական մինի այգի» ծրագրին և 2023 թ.-ին ամբողջ հանրապետությունում զբաղեցրինք 1-ին հորիզոնականը: Մենք նաև այս ձևով ենք նպաստում համայնքի կրթական կարիքների բավարարմանը:

4) Այս ամենը միտված է բավարարելու շահառու խմբերի կարիքը, որոնց 60%-ը Նեղոց գյուղի բնակիչներ են:

**Դպրոցի գործունեության հիմնական խոչընդոտները.**

Դպրոցը ներառված է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում, ինչի հետևանքով դպրոցին հատկացվող ֆինանսական միջոցները խիստ սահմանափակ են, դպրոցում չկան մի շարք կարևոր հաստիքներ (փոխտնօրեն, ՄԿԱ տեղակալ, գրադարանավար, հոգեբան, գործավար), որոնք խիստ անհրաժեշտ են հանրակրթության նոր չափորոշչի ներդրման, նոր առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով կրթություն կազմակերպելու համար:

- ✓ Ուսուցիչների արտահոսք՝ դպրոցի միավորմամբ պայմանավորված (չսպասելով գործընթացի ավարտը):
- ✓ Գյուղական համայնքներում տարեցտարի ավելացող մանկավարժական կադրերի պակասը (չնայած մինչև 100 սովորող ունեցող գյուղական դպրոցների ֆինանսավորման նոր ծրագիրը բավականին մեղմել է իրավիճակը):

- Ֆորս-մաժորային իրավիճակներ, որոնք ցնցումների են ենթարկում կրթական համակարգը:

## Հաստատության ենթակառուցվածքների հնարավորությունները




## Դպրոցի առաքելությունը

*<<Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:>>*

*Ադոլֆ Դիստերվիգ*

Ազգային դպրոցը պետական քաղաքականության հենքն է, որը առաջին հերթին պետք է ապահովի սովորողների որակյալ կրթություն ստանալու իրավունքը: Դպրոցը պետք է ունենա այնպիսի մանկավարժական և վարչական աշխատողների թիմ, որն ունակ կլինի ձևավորելու աշակերտի՝ մեր վաղվա քաղաքացու մեջ այնպիսի որակներ, որ նա ցանկացած իրավիճակում ճիշտ օգտագործի իր ունակությունները և կարողությունները, ունենա մարդկային արժանապատվության վեհ զգացում, լինի մրցունակ և պատրաստ լինի դիմակայելու ժամանակի տարբեր մարտահիրավերներին: Դպրոցը պետք է ունենա կրթական առողջ միջավայր, կրթություն ստանալու հավասար պայմաններ ստեղծի ցանկացած երեխայի համար: Դպրոցում աշխատող մանկավարժներից պահանջվում է նվիրում, պատասխանատվության մեծ զգացում՝ ունակ լինելու ընկալելու նորը,

ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համահունչ քայլելու: Այս գերարագ զարգացող դարաշրջանում ժամանակին համահունչ քայլելու համար անհրաժեշտ է նաև դպրոցի ճիշտ և ճկուն կառավարում, ուժեղ մասնագիտական թիմի ձևավորում:

Մեր դպրոցի առաքելությունը բխում է «Հանրակրթության մասին օրենքի» 4-րդ հոդվածից.

Ձևավորել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձ:

Մեր տեսլականն է՝ ունենալ մրցունակ դպրոց՝ հմուտ և ժամանակի պահանջներին համահունչ կրթություն ապահովող մանկավարժական թիմով, ժողովրդավարության սկզբունքներին հավատարիմ, արդար և ճկուն ղեկավարմամբ: Ձևավորել ստեղծագործ, նախասիրություններն ու ունակությունները զարգացնող, գիտելիքի դերն արժևորող աշակերտներ, գեղեցիկ և կրթական բոլոր պահանջներին բավարարող դպրոցական միջավայր, որտեղ կտիրի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Դպրոցում է կերտվում հայրենիքի հետագա զարգացման տեսլականը:

# 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 2. 1. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների  քանակական և որակական արդյունքները

Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցը իր ուսումնադաստիարակչական գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար սահմանել է կրթական կարիքների հետևյալ ուղղվածությունները.

- ✔ Իրականացնել պետական քաղաքականությանը համահունչ և չափորոշչահեն կրթություն:
- ✔ Ստեղծել կրթություն ստանալու հավասար պայմաններ բոլոր աշակերտների համար:
- ✔ Ապահովել բռնությունից, բուլինգից զերծ միջավայր, ստեղծել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:
- ✔ Բացահայտել և զարգացնել երեխաների ունակությունները և նախասիրությունները՝ դրանք ճիշտ ուղղորդելով:
- ✔ Ստեղծել  նպաստավոր պայմաններ ուսուցիչների ինքնակրթության և ստեղծագործ աշխատանքի համար: Հասարակության մեջ բարձրացնել, արժևորել ուսուցչի դերը և հեղինակությունը:
- ✔ Ստեղծել ամուր կապ դպրոցի և ծնողական համայնքի միջև՝ միասին լուծելով առաջացած խնդիրները:
- ✔ Ձևավորել գեղեցիկ, կոկիկ դպրոցական միջավայր՝ աշակերտների մեջ սերմանելով գեղեցիկը գնահատելու և պահպանելու արժեքները:
- ✔ Աշակերտների մոտ զարգացնել հոգևոր, ֆիզիկական և մտավոր կարողություններ:
- ✔ Ձևավորել կիրթ, ստեղծարար, հայրենասեր, բազմակողմանի զարգացած և ժամանակին համընթաց քայլող քաղաքացի:
- ✔ Ապահովել արդար, թափանցիկ և ճկուն կառավարում:

Սրանց իրագործումը թույլ կտա ունենալ մրցունակ դպրոց՝ բոլոր առումներով համապատասխանելով ժամանակի պահանջներին:

**Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների վերլուծության**

| Որակական | Քանակական |
|---|---|
| • 2022-2023 ուս. տարում սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման տարեկան միջին գնահատականների և 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, իսկ 9-րդ դասարանում ավարտական քննությունների միջին միավորների համապատասխանություն:<br>• 4-րդ դասարան «Մայրենի»- տարեկան միջին գնահատականը և գիտելիքների ստուգման միջին միավորը 7:<br>• 4-րդ դասարան «Մաթեմատիկա»- տարեկան միջին գնահատականը և գիտելիքների ստուգման միջին միավորը 6:<br>• 9-րդ դասարան «Հայոց լեզու»- տարեկան միջին գնահատականը 5, իսկ ավարտական քննության միջին միավորը 13:<br>• 9-րդ դասարան «Հայ գրականություն» և «Հանրահաշիվ»- տարեկան միջին գնահատականը 5, իսկ ավարտական քննության միջին միավորը 9:<br>• 9-րդ դասարան «Գերմաներեն»- տարեկան միջին գնահատականը 5, իսկ ավարտական քննության միջին միավորը 8:<br>• 9-րդ դասարան «Ֆիզիկա»- | • 2022-2023 ուս տարում<br>✓ գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը /«9» և «10» տարեկան միջին գնահատական ունեցող/ տարրական դպրոցում 7/21%/, իսկ հիմնական դպրոցում՝ 0 /0%/:<br>✓ ցածր առաջադիմությամբ/«4», «5» և «6» տարեկան միջին գնահատական ունեցող/ սովորողների թիվը տարրական դպրոցում 25/78%/, իսկ հիմնական դպրոցում՝ 36 /100%/:<br><br>2021-2022 ուս. տարվա համեմատությամբ նկատվում է գերազանց առաջադիմությամբ սովորողների թվի նվազում 1,03 %-ով, իսկ ցածր առաջադիմությամբ սովորողների թվի աճ՝ 33%-ով:<br><br>• Սովորողների ավարտման գործակիցը՝ 100%:<br><br>• Երկտարեցների թիվ՝ 0 /0%/:<br><br>• Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը՝ 3 /100%/:<br><br>• Սովորողների բացակայությունների թիվը ժամերով.<br>✓ 2020-2021 ուս տարի՝ 345 |

| | |
|---|---|
| տարեկան միջին գնահատականը 6, իսկ ավարտական քննության միջին միավորը 13:<br>- 9-րդ դասարան «Հայոց պատմություն»- տարեկան միջին գնահատականը 6, իսկ ավարտական քննության միջին միավորը 9:<br><br>«Հայոց լեզու» առարկայի դեպքում դիտվում է ավարտական քննության միջին միավորի ավելի բարձր ցուցանիշ, ինչը պայմանավորված է սովորողների լրացուցիչ աշխատանքի հետ /ուսուցիչը նախքան քննությունը իրականացրել է հետևողական խորհրդատվություններ՝ յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքին համապատասխան/:<br><br>- Առարկայական օլիմպիադաներին, «Մեղու», «Կենգուրու», «Կորիզ» և այլ մրցույթներին մասնակցելու ցանկության խիստ պակաս:<br>- Կամավոր ատեստավորում անցած և տարակարգ ունեցող ուսուցիչների առկայություն:<br>- Վերջին երեք ուստարիների ընթացքում ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թվի նվազում:<br>- Ինքնակրթվելու, իրազեկված լինելու, ժամանակի կրթական պահանջը բավարարելու նախաձեռնություն, տարբեր վերապատրաստումներին, սեմինարներին, փորձի փոխանակումներին ուսուցիչների ակտիվ մասնակցություն<br>- Ուսուցման գործընթացում ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում (սովորողների ուսումնառության արդյունքների | ✓ 2021-2022 ուս տարի՝ 373<br>✓ 2021-2022 ուս տարի՝ 362<br><br>Նախորդ ուսումնական տարվա համեմատ դիտվում է մեկ սովորողին համապատասխան բացակայությունների միջին թվի նվազում 11%-ով:<br><br>- Վերջին երեք ուստարիների ընթացքում դասարանների անփոփոխ թիվ՝ 8 դասարան:<br><br>- Վերջին երեք ուստարիների ընթացքում սովորողների թվի աճ՝<br>2020-2021ուստարի՝ 56<br>2021-2022 ուստարի՝ 58<br>2022-2023 ուստարի՝ 68<br><br>- Վերջին երեք ուստարիների ընթացքում ուսուցիչների թվի աճ՝<br>2021-2022 ուստարի՝ 16<br>2022-2023 ուստարի՝ 16<br>2023-2024 ուստարի՝ 19<br><br>- Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվ՝ 18 /95%/:<br><br>- Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվ՝ 1 /5%/:<br><br>- Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվ՝ 2 /10%/:<br><br>- Ուսուցիչների՝ նոր ՀՊՉ-ների ներդրմանն ուղղված վերապատրաստումներին մասնակցություն՝ 95 %:<br><br>- Մենթոր կամ վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը՝ 0: |

| | |
|---|---|
| գնահատման համար խաղերի, վիկտորինաների պատրաստում, տեսանյութերի, դիագրամների, տեսասահիկների պատրաստում):<br>- Տարեկան աշխատանքային պլաններում և ՆԴՎ պլաններում չափորոշչային պահանջներից բխող գործառույթների պլանավորում:<br>- Արդի պահանջներին համապատասխան առարկայական թեմատիկ պլանների առկայություն:<br>- Տնօրենության կողմից ուսուցման ու ուսումնառության արդյունավետության ու որակի վերահսկողություն՝ մշտադիտարկումների, մնացորդային գիտելիքների ստուգման, գրավոր աշխատանքների, դասալսումների միջոցով:<br>- Փորձի փոխանակման, փոխադարձ դասալսումների թվի աճ:<br>- Նոր չափորոշչային դասարաններում գնահատման, դրա ձևերի և մեթոդների ընտրության, դրանց ճիշտ կիրառման ուղղությամբ մանկավարժական խորհրդում և մ/մ նիստերում անընդհատ քննարկումներ:<br>- Դպրոցում գործող խմբակների առկայություն:<br>- «Արմաթ» ինժեներատեխնիկական լաբորատորիայի առկայություն:<br>- Սովորողների մոտ ճանաչողական և հաղորդակցական հմտությունների զարգացմանը նպաստող միջոցառումների, էքսկուրսիաների, վիկտորինաների, քննարկումների կազմակերպում: | - Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը՝ 19 /100%/:<br>- ՏՀՏ միջոցները ուսուցման գործընթացում կիրառող ուսուցիչների թիվը՝ 18 /95%/:<br>- Վերջին երեք ուստարիների ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված փոխադարձ դասալսումների թիվը՝<br>2020-2021 ուստարի՝ 75<br>2021-2022 ուստարի՝ 267<br>2022-2023 ուստարի՝ 324<br>- ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների թիվը՝ 4:<br>- «Թմրանյութերի, ալկոհոլի և ծխախոտի ազդեցությունը մարդու առողջության վրա» թեմայով զրույցների, միջոցառումների թիվը՝ 5, մեկ ուստարվա կտրվածքով:<br>- Բռնության, ֆիզիկական ու հոգեբանական ճնշման, բուլինգի բացառմանն ուղղված միջոցառումների քանակը՝ 4:<br>- Համադպրոցական միջոցառումների թիվը՝ 14 /2022-2023 ուստարի/:<br>- Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնված շաբաթօրյակների, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներ՝ 5 /2022-2023 |

| | |
|---|---|
| - Դպրոցում բազմակարծիք և համագործակցային միջավայրի ապահովում:<br>- Ձևավորված ապահով միջավայր, ոչ միայն շենքային պայմաններով պայմանավորված, այլև աշակերտների և մանկավարժների միջև ներդաշնակ, հոգատար և հարգալից վերաբերմունքի առկայությամբ:<br>- Ծնողները լիովին ներգրավված են դպրոցի կյանքում, անկաշկանդ բարձրաձայնում են իրենց հուզող հարցերը:<br>- ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող հոգատար, թիմային աշխատանք:<br>- Դպրոցում բոլոր սովորողների մոտ ձևավորված է ապրումակցման կարողությունը, որի ամենաակնառու դրսևորումն եղավ 2023թ.-ին Արցախից տեղափոխված և դպրոց ընդունված 6 աշակերտների նկատմամբ, ովքեր մեծ սեր և հոգատարություն ստացան բոլորի կողմից և շատ արագ լիարժեք ներառվեցին դպրոցի կյանքին: | ուստարի/:<br><br>- Արցախից տեղափոխված և դպրոց ընդունված աշակերտների թիվը՝ 6:<br><br>- «Հայկական կրթական միջավայր», «Պաշարների շտեմարան» հարթակներում տեղադրված կրթական, ուսումնադաստիարակչական էլեկտրոնային պաշարներից օգտվող ուսուցիչների թիվը՝ 19/100%/:<br><br>- Teams կրթական հարթակում գրանցված և ԿԶՆԱԿ հիմադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին, խորհրդատվություններին մասնակցող ուսուցիչների թիվը՝ 19/100%/: |

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության, կրթության որակի բարելավման ուղղությամբ սույն զարգացման ծրագրում սահմանվել են հետևյալ նպատակները.

- Պետական կրթական քաղաքականությանը համահունչ և չափորոշչահեն կրթության ապահովում:
- Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ, դիրքորոշում և արժեքային համակարգ ունեցող անձի ձևավորում:
- Բազմակարծիք, համագործակցային, անվտանգ դպրոցական միջավայրի ձևավորում:

## 2.2 Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները

Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցում աշխատում է 19 ուսուցիչ, որոնցից 18-ը բարձրագույն մանկավարժական կրթություն, 1 դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, 1 ուսուցչի օգնական, 1 նախակրթարանի դաստիարակ: Դպրոցը տարածքի այն եզակի գյուղական դպրոցներից է, որտեղ չկան ուսուցչի բացակայությամբ պայմանավորված, չդասավանդվող կամ հեռավար դասավանդվող առարկաներ: Բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետները: Դպրոցում 1 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ, իսկ 2 ուսուցիչ ստանում են կամավոր ատեստավորման հավելավճար:

Ուսուցչի մասնագիտական զարգացման մոտիվացիան փոխկապակցված է նաև վարձատրության հետ: «Գյուղական մինչև 100 աշակերտ», «ԲՏՃՄ» հավելավճար տրվող ծրագրերի ներմուծումը խիստ դրական ազդեցություն ունեցավ՝ մոտիվացնող, մրցակցային պայմաններ ստեղծող և պարտավորեցնող: Դպրոցի ուսուցիչների 60%-ն օգտվում է «Գյուղական մինչև 100 աշակերտ» ֆինանսավորման նոր ծրագրից:

Ուսուցիչների պարտադիր ատեստավորման այս նոր ձևաչափը նույնպես կարող է նպաստել ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացմանը, եթե կատարվել է կարիքի բացահայտմանն ուղղված հետևողական աշխատանք, ճիշտ մշտադիտարկումներ, ուսուցչի անկեղծ ինքնագնահատում:

Դպրոցի ուսուցիչների 95 %-ը մասնակցել են նոր ՀՊՉ-ների ներդրման վերապատրաստումներին: Մանկավարժները գիտակցում են ինքնակրթվելու այսօրվա խիստ պահանջը, իրազեկված լինելու, ժամանակի կրթական պահանջը բավարարելու համար իրենց նախաձեռնությամբ մասնակցում են տարբեր վերապատրաստումների, սեմինարների, փորձի փոխանակումների (ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ԿԳՄՍՆ, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան): Դպրոցը հեռավար դասավանդման հմտությունները զարգացնելու նպատակով փորձնական դասեր է կազմակերպել Ճաթերի, Ալավերդու թիվ 12 և Ալավերդու թիվ 11 դպրոցների հետ:

Համաձայն հաստատության կանոնադրության՝ մանկավարժական աշխատակիցների աշխատանքը մշտապես վերահսկվում է դպրոցի տնօրենության, մեթոդական միավորումների նախագահների կողմից՝ անշուշտ հաշվի առնելով մանկավարժական աշխատողների բարեվարքության, ներքին կարգապահական կանոնները: Տարեկան աշխատանքային պլանում, ներդպրոցական վերահսկողության պլանում հստակեցված են պահանջվող աշխատանքների ուղղությունները, ժամկետները և պատասխանատուները:

Դպրոցում գործում է 3 առարկայական մեթոդական միավորումներ, որոնք ձևավորվում են հաստատության կանոնադրության համաձայն.

- Տարրական կրթության
- Հումանիտար առարկաների
- Բնագիտական առարկաների






| ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ | |
|---|---|
| ***ՏՆՕՐԵՆ*** | **1** |
| **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ** | **ԹԻՎԸ / ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ** |
| ***ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ՝*** | **19/13** |
| Տարակարգ ունեցող ուսուցիչներ | **1** |
| Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | **2** |
| Վերապատրաստում անցած ուսուցիչներ | **բոլորը** |
| Վերապատրաստող ուսուցիչներ | **0** |
| Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | **3** |
| Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ | **18** |
| Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ | **1/ 05** |
| Զինղեկ | **1/1,5** |
| Ուսուցչի օգնական | **1/0,5** |
| Նախակրթարանի դաստիարակ | **1/0,5** |
| **ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | **ԹԻՎԸ / ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ** |
| Գլխավոր հաշվապահ | **1 / 1** |
| Օպերատոր | **1 / 0.75** |
| Տնտեսվար | **1 / 0.5** |
| Հավաքարար | **2 / 1.25** |
| Բակապան | **1 / 0.5** |

Ուսուցիչների միջին տարիքը 43 է: Դպրոցի ուսուցիչներն իրազեկված են «Հայկական կրթական միջավայր» հարթակի մասին, ակտիվորեն օգտագործում են «Պաշարների շտեմարան» կայքում տեղադրված կրթական, ուսումնադաստիարակչական էլեկտրոնային պաշարները: Բոլոր ուսուցիչները գրանցված են Teams կրթական հարթակում, հատկապես ԿԶՆԱԿ հիմնադրամի

կողմից կազմակերպված վերջին վերապատրաստումները նպաստեցին հարթակից օգտվելու ակտիվությանը: Այնուամենայնիվ, ուսուցիչների մոտ առկա է ՏՀՏ գործիքները դասի տարբեր փուլերում օգտագործելու, դրանցով հայտորոշիչ, ձևավորող ու ամփոփիչ գնահատում իրականացնելու փորձառության պակաս:

Ներդպրոցական վերահսկողության, տնօրենության կողմից իրականացվող մշտադիտարկումների ու դասալսումների արդյունքում արձանագրվել է նաև, որ միջինից բարձր տարիք ունեցող մանկավարժների մոտ նկատվում է ինքնակրթվելու մոտիվացիայի պակաս, կան դժվարություններ նոր ՀՊՉ-ով պայմանավորված փոփոխությունների կիրառման ժամանակ: Դպրոցում չկան մի շարք կարևոր հաստիքներ (փոխտնօրեն, ՄԿԱ տեղակալ, գրադարանավար, հոգեբան), որոնք անհրաժեշտ են հանրակրթության նոր չափորոշչի ներդրման, առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով սահմանված վերջնարդյունաքները բավարարելու, արդյունավետ ուսումնադաստիարակչական գործունեություն իրականացնելու համար:

Մշտադիտարկումների, դասալսումների, սովորողների ու ծնողների հետ հանդիպումների, հարցումների միջոցով մանկավարժական աշխատակիցների մասնագիտական զարգացման կարիքը բացահայտելուց բացի կազմվել է նաև օնլայն անանուն հարցում հենց դպրոցի ուսուցիչների շրջանում, որպեսզի ուսուցիչներն իրենք ներկայացնեն իրենց մասնագիտական զարգացման կարիքը: Հարցաշարում յուրաքանչյուր մանկավարժական աշխատակից պետք է կատարի մասնագիտական զարգացման կարիքի ինքնագնահատում ըստ հետևյալ չափանիշների.

- ✓ Առարկայական չափորոշչի ու ծրագրի պահանջները կատարելու համար անհրաժեշտ առարկայական գիտելիքների իմացության մակարդակը:
- ✓ Դասի պլանավորման հմտություններ՝ դասի նպատակների, վերջնարդյունքների, ուսուցման ու ուսումնառության մեթոդների, սովորողների մասնակցությունը ենթադրող գործողությունների, միջառարկայական կապերի նշում:
- ✓ Դասի թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ուսումնական մեթոդների ու ռազմավարությունների ընտրության կարողությունները՝ ապահովելով միջառարկայական, ներառարկայական ու կյանքի հետ կապեր:
- ✓ Դպրոցի գրադարանում և լաբորատորիաներում առկա կրթական ռեսուրսներից, առցանց կրթական ռեսուրսներից օգտվելու հմտությունները:
- ✓ ՏՀՏ միջոցների /համակարգիչ, պլանշետ, բջջային հեռախոս, օնլայն հավելվածներ, տեսակոնֆերանսային հարթակներ/ կիրառման հմտությունները ինչպես նյութի մատուցման, այնպես էլ գիտելիքների ստուգման և սովորողների ներգրավման նպատակներով:
- ✓ Մանկավարժական աշխատողի՝ սովորողների մոտ 21-րդ դարի հմտությունների զարգացման ու խթանման կարողությունները:
- ✓ Մանկավարժական աշխատողի՝ յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներն ու անհատական առանձնահատկությունները բացահայտելու հմտությունները:
- ✓ Ուսումնառության գնահատման սկզբունքների, մեթոդաբանության իմացության, գնահատման գործիքների կիրառման, դրանց մշակման ու ստեղծման հմտություններ:

- ✓ Յուրաքանչյուր սովորողի համար կրթության կազմակերպման համար հավասար մասնակցություն ապահովելու, բուլինգն ու գենդերային խտրականությունը բացառելու հմտություններ:
- ✓ Սեփական աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար հանրակրթության ոլորտի օրենսդրության իմացություն:

Վերոգրյալ յուրաքանչյուր չափանիշի համար առաջարկվել էր ինքնագնահատման 10 միավորային սանդղակ: Հարցմանը մասնակցել է 17 մանկավարժական աշխատող՝ 16 ուսուցիչ և 1 ուսուցչի օգնական:

1. Առարկայական չափորոշչի ու ծրագրի պահանջները կատարելու համար անհրաժեշտ առարկայական գիտելիքների իմացության մակարդակը.
17 responses




2. Դասի պլանավորման հմտություններ՝ դասի նպատակների, վերջնարդյունքների, ուսուցման ու ուսումնառության մեթոդների, սովորողների մաս...ղությունների, միջառարկայական կապերի նշում:
17 responses



3. Դասի թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ուսումնական մեթոդների ու ռազմավարությունների ընտրության կարողությո...կան, ներառարկայական ու կյանքի հետ կապեր:
17 responses




4. Դպրոցի գրադարանում և լաբորատորիաներում առկա կրթական ռեսուրսներից, առցանց կրթական ռեսուրսներից օգտվելու հմտությունները.
17 responses




5. ՏՀՏ միջոցների /համակարգիչ, պլանշետ, բջջային հեռախոս, օնլայն հավելվածներ, տեսակոնֆերանսային հարթակներ/ կիրառման հ...ն և սովորողների ներգրավման նպատակներով:
17 responses



6. Մանկավարժական աշխատողի՝ սովորողների մոտ 21-րդ դարի հմտությունների զարգացման ու խթանման կարողությունները.

17 responses




7. Մանկավարժական աշխատողի՝ յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներն ու անհատական առանձնահատկությունները բացահայտելու հմտությունները.

17 responses




8. Ուսումնառության գնահատման սկզբունքների, մեթոդաբանության իմացության, գնահատման գործիքների կիրառման, դրանց մշակման ու ստեղծման հմտություններ.

17 responses



9. Յուրաքանչյուր սովորողի համար կրթության կազմակերպման համար հավասար մասնակցություն ապահովելու, բուլինգն ու գենդ...ն խտրականությունը բացառելու հմտություններ.
17 responses




10. Սեփական մասնագիտական զարգացման կարիքներին համապատասխան համաժողովների, վերապատրաստումների, ինքնա...գործընկերներին փոխանցելու փորձառություն:
17 responses




11. Սեփական աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար հանրակրթության ոլորտի օրենսդրության իմացություն:
17 responses



Համադրելով մշտադիտարկումների ու հարցման արդյունքները, կատարելով համապատասխան վերլուծություն՝ եկա այն եզրահանգման, որ Նեղուցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցի մանկավարժական աշխատողները հիմնականում մասնագիտական զարգացման կարիք ունեն հետևյալ ոլորտներում.

- Սովորողների մոտ 21-րդ դարի հմտությունների ձևավորում ու զարգացում:
- ՏՀՏ գործիքների արդյունավետ կիրառում դասի տարբեր փուլերում, ինչպես նաև իրենց իսկ կողմից ՏՀՏ գործիքների միջոցով կրթական ռեսուրսների ստեղծում:
- Թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ ուսուցման ու ուսումնառության համապատասխան մեթոդներ ու հնարներ ընտրելու հմտություն:
- Ուսումնառության արդյունքների գնահատման համար տարբեր գործիքների կիրառում, ձևավորող գնահատում իրականցնելու հմտությունների ձևավորում ու զարգացում:
- Նոր առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ առարկայական գիտելիքների իմացություն:
- Յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները բացահայտելու հմտություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ սույն զարգացման ծրագրում սահմանվում են հետևյալ նպատակները.

- ✓ Ապահովել մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների զարգացումը, որն իր հերթին կբերի կրթության որակի բարելավման:
- ✓ Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում:
- ✓ Դպրոցում կամ հարակից դպրոցներում առկա առաջավոր փորձի փոխանցման ապահովում, խրախուսում:

## 2.3. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

**Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցի կառավարման <u>խորհուրդը</u>** միացյալ է (Նեղոցի հ/դ, Ջիլիզայի մ/դ, Շամլուղի մ/դ), կազմված է 19 անդամներից: Իր գործունեությունը կազմակերպում է դպրոցի կանոնադրության, իրենց հաստատած աշխատակարգի և ժամանակացույցի համաձայն: Նիստերն անցնում են ինչպես հեռավար, այնպես էլ առկա ձևաչափով՝ պարբերաբար և

արտահերթ: Կառավարման խորհրդի անդամներից շատերը ներառված են դպրոցի ուսումնադաստիարակչական տարբեր միջոցառումներում:

Խորհուրդը.

- ✓ իրականացնում է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն,
- ✓ քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, ֆինանսական հաշվետվությունները,
- ✓ քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները,
- ✓ հաստատում է ներքին կարգապահական կանոնները, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- ✓ վերահսկում է զարգացման ծրագրի կատարողականը և ըստ անհրաժեշտության հաստատում ծրագրում կատարված փոփոխություններն ու լրացումները,
- ✓ հաստատում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿՈւ աշակերտների կազմը,
- ✓ հաստատում է ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը:

| Ուժեղ | Թույլ |
|---|---|
| ➢ **Կառավարման խորհուրդն** իր լիազորության սահմաններում աջակցում է դպրոցի նախաձեռնություններին:<br><br>➢ Օրենքները կիրառում են խելամիտ և ուշադիր, պատասխանատվությամբ են վերաբերվում կայացրած որոշումներին:<br>➢ Տնօրենն ապահովում է գործընթացների թափանցիկությունը, մասնակցում է նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:<br>➢ Աջակցում են հաստատության տնօրենի կառավարման աշխատանքներին: | ➢ **Կառավարման խորհրդի** անդամները նիստերին առկա ձևաչափով մասնակցելու դժվարություններ են ունենում՝ ժամանակի սղության պատճառով:<br><br>➢ Առկա է խորհրդի անդամի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակ:<br><br>➢ Տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին:<br><br>➢ Առկա է նախաձեռնությունների պակաս:<br><br>➢ Միացյալ խորհուրդների գործունեության արդյունավետության ցածր մակարդակ: |

**Համայնք** – Նեղոցի հիմնական դպրոցը համայնքի միակ դպրոցն է և միշտ սերտ համագործակցության մեջ է եղել համայնքի հետ՝ դառնալով համայնքի մշակութային կենտրոնը: Դպրոցն ակտիվ մասնակցություն է ունենում համայնքում կազմակերպվող բոլոր միջոցառումներին (շաբաթօրյակներ, մեծարման միջոցառումներ, հիշատակի օրեր, գյուղի օրվան նվիրված միջոցառումներ և այլն): Դպրոցն էլ իր հերթին գտնվում է համայնքի ուշադրության ներքո: Բազմաթիվ ուսուցիչներ համայնքի ղեկավարի կողմից պարգևատրվել են համայնքում երկարատև կրթադաստիարակչական աշխատանքներ իրականացնելու համար: Ուսուցչի տոնին միշտ ուշադրության են արժանանում դպրոցի մանկավարժական աշխատողները: Համայնք-դպրոց սերտ համագործակցության արդյունքում շուտափույթ լուծում են ստանում համայնքապետարանի կարգավորման տիրույթում գտնվող հարցեր (նոր աղբարկղերի տեղադրում, պատշաճ աղբահանության կատարում, տեխնիկային վերաբերող հարցեր):

Դպրոցը համագործակցում է **կրթության կառավարման և զարգացման տարբեր մարմինների հետ**, կատարում նրանց՝ օրենքին չհակասող հանձնարարականները: Տարբեր կառույցների կողմից դպրոցում պարբերաբար կատարվում են ստուգումներ, այցեր, վեր են հանվում խնդիրները, հանգամանալից բացատրվում և նշվում թերությունների շտկման ուղիները, ինչպես նաև իրականացվում են կարողությունների ուժեղացմանն ուղղված դասընթացներ, վերապատրաստումներ: Դպրոցն ակտիվ համագործակցում է.

- ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի,
- Լոռու մարզպետարանի հանրակրթության վարչության,
- Կրթության տեսչական մարմնի,
- ԴՍԵԲ-ի (սննդի ծրագրի),
- Մշակութային կառույցների հետ, /թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ, ստեղծագործական կազմակերպություններ/:

Դպրոցն ակտիվ համագործակցում է նաև համայնքում գործող **այլ կազմակերպությունների հետ՝**

- ✓ Թումանյանի ոստիկանության բաժին,
- ✓ Նախնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կառույցներ,
- ✓ ԱԻՆ,
- ✓ Ալավերդի խոշորացված համայնքի այլ դպրոցներ:

Հատկապես կարևորում ենք դպրոցի համագործակցությունը հետևյալ կառույցների հետ:

- ✓ Ախթալայի լեռնահարստացուցիչ գործարանի հետ համագործակցության արդյունքում գործարանն իր տրանսպորտային միջոցների հաշվին (արդեն 2 տարի է) կազմակերպում է դպրոցի աշակերտների և մանկավարժների տեղափոխությունը տանից դպրոց, դպրոցից տուն:
- ✓ Դպրոցը 2022թ.-ից առ այսօր համագործակցում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ, մասնակցել է գրադարանի կողմից

կազմակերպած «Գրքի ճամբար» ծրագրին, կատարվել են մի քանի փոխադարձ այցելություններ՝ նպաստելով ընթերցելու մշակույթի զարգացմանը:

✓ Դպրոցը համագործակցում է Լոռու մարզի Դեբետ գյուղում գտնվող ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի հետ, պարբերաբար մասնակցում կազմակերպվող միջոցառումներին, ցուցահանդեսներին: Օրինակ, դպրոցում գործող «Արմաթ» լաբորատորիան իր թիմով երկու անգամ մասնակցել է ArmRobotics հայաստանյան առաջնությանը և հասել մինչև եզրափակիչ, (ArmRobotics 21 հայաստանյան 13-րդ, ArmRobotics 22 հայաստանյան 14-րդ առաջնություն): Երեք անգամ մասնակցել ենք DigiCode կիրառական ծրագրավորման պատանեկան 6-րդ, 7-րդ, 8-րդ մրցույթի մարզային փուլի եզրափակչին: Մեր դպրոցում պատրաստված ռոբոտները ներկայացվել են DigiTee Expo COAFFest 2023 ցուցահանդեսներում:

**Ծնողական համայնքը** համագործակցության ամենակարևոր օղակներից մեկն է: Նրանց հետ ամենօրյա սերտ կապն իր ուղղակի ազդեցությունն է ունենում կրթադաստիարակչական աշխատանքների վրա: Մեծ է նրանց աջակցությունը նաև արտադպրոցական կրթության կազմակերպման գործում: Ծնողներին իրազեկում ենք պարտադիր կրթությունից աշակերտների դուրս մնալու հետևանքների մասին, տարվում են աշխատանքներ աշակերտների բացակայությունները վերահսկելու և նվազեցնելու ուղղությամբ: Ծնողական խորհուրդներն իրենց լիազորությունների շրջանակում նպաստում են դպրոցում ծառացած խնդիրների լուծմանը: Ծնողական համայնքը նաև մեծ աջակցություն ցուցաբերեց Արցախից տեղափոխված 6 երեխաներին (հագուստ, գրենական պիտույքներ, կենցաղային իրեր ): Ծնողների հետ տարվում են աշխատանքներ նաև երեխաների անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ, իրազեկում ենք արտաքին միջավայրի վատ ազդակների ազդեցության մասին, զգուշացնում տարբեր կախվածություններից զերծ պահելու մասին (սոցցանցեր, համակարգչային խաղեր): Դպրոցը ծնողական համայնքի հետ որդեգրել է ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան թափանցիկ գործելաոճ:

| Ուժեղ | Թույլ |
|---|---|
| **Համայնք**<br>➢ համագործակցությունը ապահովում է դպրոց -համայնք կապի ամրապնդմանը:<br>➢ Համայնքում իրականացվող միջոցառումներին ակտիվ մասնակցությամբ դպրոցը կրթում է հոգատար, պատասխանատվության զգացումով քաղաքացիներ, նպաստում է համայնքային բարեկեցության զարգացմանը:<br>➢ Համայնքապետարանը նպաստում է դպրոցի միջավայրի բարեկարգմանը, աղբահանության իրականացմանը: | **Համայնք**<br>➢ Կատարված գործողությունները հաճախ լինում են ժամանակավրեպ:<br>➢ **Կրթության կառավարման և զարգացման տարբեր մարմինների հետ** համագործակցության սահմանափակություն՝ ժամանակի սղության և անմիջական, առերես շփումների դժվարություն հեռավոր տեղակայության |

| | |
|---|---|
| ➢ Խրախուսում է մանկավարժներին (շնորհակալագրեր, պարգևատվություններ)<br>➢ **Կրթության կառավարման և զարգացման տարբեր մարմինների հետ** համագործակցությունները տալիս են նոր հնարավորություններ և հեռանկարներ, ուժեղացնում կազմակերպության ռեսուրսները, մասնագիտական կարողությունները:<br>➢ Համագործակցությունը **այլ կազմակերպությունների** հետ նպաստում է սոցիալական խնդիրների լուծմանը, անհրաժեշտ ռեսուրսների ներգրավմանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, նախագծային ուսուցման կազմակերպմանը:<br>➢ **Ծնողական համայնքի** հետ համագործակցությունը մեծացնում է սովորողների հետ իրականացվող կրթական գործընթացների արդյունավետությունը. խնդիրներն ավելի արագ և ճիշտ լուծումներ են ստանում:<br>➢ Ծնողական համայնքը նպաստել է դպրոցում երկարացված օրվա /երկարօրյա ուսուցում/ կազմակերպմանը, խմբակների կազմակերպմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանը: | պատճառով:<br>➢ **Այլ կազմակերպությունների** հետ բազմազան համագործակցությունները սահմանափակ են համայնքում դրանց բացակայության, հեռավոր տեղակայման պատճառով:<br>➢ **Ծնողական համայնքի** հետ համագործակցության հիմնական խոչընդոտը նախաձեռնողականության, մոտիվացիայի ցածր մակարդակն է:<br>➢ Ցածր կենսամակարդակ ունեցող ընտանիքների թիվը մեծ է: |

## 2.4 Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը

ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցի **խորհրդակցական մարմիններ են.**

- ✓ Մանկավարժական խորհուրդը
- ✓ Ծնողական խորհուրդը
- ✓ Աշակերտական խորհուրդը

Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:

**Մանկավարժական խորհուրդ** – Դպրոցի 19 մանկավարժներն էլ ընդգրկված են մանկավարժական խորհրդի կազմում: Մանկավարժական խորհուրդը քննարկում է դպրոցի կանոնադրությամբ և օրենքներով իրեն վերապահված հարցերը՝ առավելապես ուսումնադաստիարակչական և չափորոշչային հարցերին վերաբերվող, ԿԱՊԿՈՒ աշակերտներին, կրթության որակին առնչվող հարցեր: Խորհուրդն իրականացնում է ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված գործառույթներ:

**Ծնողական խորհուրդը** – Ձևավորվում է սահմանված կարգով, այն բաղկացած է 9 անդամից: Ծնողական խորհուրդը տնօրենին կամ մանկավարժական խորհրդին է ներկայացնում առաջարկություններ՝ կրթադաստիարակչական հարցերի շուրջ: Հրավիրում է դասարանական և համադպրոցական ժողովներ: Ճիշտ համագործակցության ընթացքում ձևավորվում են սովորողների դաստիարակության միասնական պահանջներ: Մեծ աշխատանքներ է տանում արտադասարանական և արտադպրոցական կրթության կազմակերպման գործում:

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատամամբ. | 0 | 0 | 0 |
| Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը | 1 | 1 | 1 |
| Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը. | 0 | 0 | 0 |
| Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը ուստարվա ընթացքում | 2 | 3 | 2 |
| Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում | 0 | 0 | 0 |
| Սովորողների արտադպրոցական և արտադասարանական | 10% | 13% | 18% |

| | | | |
|---|---|---|---|
| աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը. | | | |
| Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.emis.am, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից | 35% | 35% | 47% |

| Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները | | |
|---|---|---|
| **Առաջարկությունը** | **Առաջարկներիք ննարկմանը մասնակից ծնողների թիվը** | **Մեկնաբանություն** |
| 1.Թեմատիկ գրավոր աշխատանքների տետրերի ձեռքբերման մասին | 11 | Առաջարկը դրվել է քվեարկության և ընդունվել է որոշում. Անհրաժեշտության դեպ-քում ձեռք բերել՝համաձայնեցնելով դասարանների ծնողների հետ |
| 2.Դպրոցի և ծնողների միջև կապերի ամրապնդման, երեխաների դաստիարակության հարցերում մանկավարժների և ծնողների կողմից միասնական պահանջների ձևավորման մասին | 8 | Սիստեմատրկաբար կազմակերպվեցին զեկուցումներ, քննարկումներ ծնողական ժողովներում՝ <<Ընտանիք և դպրոց>> ամսագրերից ընտրված թեմաներով |
| 3. Ստեղծել ուսուցման ևդաստիարակման համար անիրաժեշտ պայմաններ | 14 | Յուրաքանչյուր նոր ուստարվա սկզբին կազմակերպվում են մաքրման և մասնակի նորոգման աշխատանքներ |

**Աշակերտական խորհուրդը -** ունի ինքնակառավարման լիազորություններ և ինքնավարության լիազորություններ: Պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ, քննարկումներ, հանդես է գալիս  առաջարկություններով: Դպրոցը խթանում է նրանց նախաձեռնությունները՝ զարգացնելով կազմակերպչական և ստեղծագործական կարողություններ: Աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի,սովորողների, ծնողների և տնօրինության  փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք:

| Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն. | | |
|---|---|---|
| **Նկարագրել աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերը** | **Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը** | **Մեկնաբանություն** |
| 1. Աշխատանք է տարվել դժվար դաստիարակվող սովորողների հետ. | 3-5% | Որոշումն իրականացվել է և տվել իր դրական |

| | | |
|---|---|---|
| Նրանց հանձնարարվել է հասարակական աշխատանք /իրականացնել հերթապահություն/ | | արդյունքը |
| 2. Դպրոցում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավում<br>Որոշում. Առաջարկել տնօրենությանը դասղեկների և ուսուցիչների ղեկավարությամբ դասարանական Ախ-երի անմիջական մասնակցությամբ դասամիջոցների ընթացքում կազմակերպել հերթապահություն՝ հաստատած համապատասխան գրաֆիկով: | 15-22% | Որոշումն իրականացվել է և տվել իր դրական արդյունքը |
| 3. Դպրոցում ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողների հաշվառման և նրանց նյութական օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթաց<br>Որոշում. Խնդրել տնօրինությանը կիրառել զեղչեր ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողների դասագրքերի վարձավճարների վրա: | 4-6% | Որոշումն իրականացվել է |
| 4. Օգնություն ուսումնառության գործընթացում հետ մնացող աշակերտներին<br>Որոշում. Հանձնարարել ուսումնադաստիարակչական հանձնախմբին կազմակերպել աշխատանքներ հետ մնացող սովորողներին օգնելու ուղղությամբ: | 5-7% | Որոշումն իրականացվել է |
| 5. Օգնություն սոցիալապես անապահով աշակերտներին | 7-12% | Որոշումն իրականացվել է |

**Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները, ներառյալ՝ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները և մասնակից սովորողների տոկոսը**

| **Միջոցառումը** | **Մասնակիցսովորողների թիվը և տոկոսը** | **Համադպրոցական կամ դասարանային** |
|---|---|---|
| 1.Աշնան տոն | 69-100% | Համադպրոցական |
| 2.Դպրոցի ամանորյա ձևավորման աշխատանքներ | 69-100% | Համադպրոցական |
| 3.Սանիտարական օր | 69-100% | Համադպրոցական |
| 4.Ուսուցչի օրվա առթիվ տոնական միջոցառում | 22-38% | Դասարանային |
| 5. Մայրենիի օր | 7-12% | Դասարանային |
| 6.Ամանորյա միջոցառումներ | 69-100% | Դասարանային<br>Համադպրոցական |
| 7.Շնորհավոր տոնդ, ուսուցի՜չ | 25-43% | Համադպրոցական |

**Առարկայական մեթոդական միավորումները** նույնպես ձևավորվում են հաստատության կանոնադրության համաձայն: Դպրոցում կան 3 մեթոդական միավորում՝

- Տարրական կրթության
- Հումանիտար առարկաների
- Բնագիտական առարկաների:

Հատկապես այս նոր չափորոշչային պահանջներով ուսուցումը կազմակերպելու համար շատ կարևոր է առարկայական մասնախմբերի գործունեությունը: Արդյունքում ուսուցիչները ստանում են մեթոդական աջակցություն, կատարում փորձի փոխանակում, տեղեկանում նորարարությունների մասին:

| Ուժեղ | Թույլ |
|---|---|
| ➢ **Մանկավարժական խորհուրդը** կատարում է ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված հետևողական աշխատանք:<br>➢ Ըստ անհրաժեշտության կազմակերպում են քննարկումներ՝ վեր հանելով և լուծման ուղիներ առաջարկելով ուսումնադաստիարակչական խնդիրներին:<br>➢ Ոչ միայն կայացնում են ուսուցման որակի բարելավմանն ուղղված որոշումներ, այլև պատասխանատվություն են կրում այդ որոշումների իրագործման համար:<br>➢ Իրավասու է կարգապահական տույժի և խրախուսման վերաբերյալ որոշումներ կայացնել:<br>➢ **Ծնողական խորհրդի** շնորհիվ հնարավոր է դառնում շտկել սովորողների դաստիարակությանը և ուսումնառությանը վերաբերվող հարցեր: | ➢ **Մանկավարժական խորհրդի** գործունեության ընթացքում ունենում է ժամանակի և դրա արդյունավետ օգտագործման խնդիր:<br>➢ Առկա է ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին հետևողականության պակաս:<br>➢ Որոշ դեպքերում առկա է իրենց պարտականությունների և իրավունքների մասին իրազեկվածության պակաս, օրենքների թերի իմացություն:<br>➢ Երբեմն դրսևորվում է հանդուրժողականության պակաս, միջանձնային կոնֆլիկտային հարաբերությունների ազդեցություն խորհրդի աշխատանքների օբյեկտիվության վրա:<br>➢ Որոշ ուսուցիչներ ցուցաբերում են պասիվ մասնակցություն:<br>➢ **Ծնողները** ցուցաբերում են նախաձեռնողականության պակաս, իրազեկվածության ցածր մակարդակ, իրավիճակների հանդեպ սուբյեկտիվ |

| | |
|---|---|
| ➢ Համադպրոցական միջոցառումների ժամանակ մեծ աջակցություն են ցուցաբերում կազմակերպչական հարցերում:<br>➢ Պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց վստահված գործին:<br>➢ **Աշակերտական խորհուրդ:** Ավելի խորքային գիտեն և ավելի ճիշտ են վերհանում աշակերտական խնդիրները:<br>➢ Անհրաժեշտության դեպքում առաջարկում են խնդիրների լուծման ուղիներ և իրենք էլ հաճախ մասնակից են դառնում այդ խնդիրների լուծմանը:<br>➢ **Առարկայական մեթոդական միավորումները** տրամադրում են մեթոդական աջակցություն՝ հատկապես սկսնակ ուսուցիչներին:<br>➢ Ապահովվում են փորձի փոխանակում:<br>➢ Առաջարկություններ են ներկայացնում դպրոցական բաղադրիչի բաշխման վերաբերյալ: | մոտեցում:<br>➢ **Աշակերտական** ներքին կարգապահական կանոնների իմացությունը ոչ լիարժեք է:<br>➢ Ցածր է սեփական նախաձեռնողականությունը:<br>➢ **Առարկայական մեթոդական միավորումները** դժվարությամբ են ուսումնասիրում առաջադեմ փորձը, արդի գրականության հասանելիության դժվարությունների պատճառով:<br>➢ Չունենք **շրջանավարտների խորհուրդ** |

## 2.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, դրա ուժեղ կողմերը և թերությունները

ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոցը հիմնադրվել է 1992 թ.-ին՝ որպես դպրոց-մանկապարտեզ, որտեղ ի սկզբանե գործել է 1-ից մինչև 4-րդ դասարանը: Հետագայում դպրոցը դարձել է 8-ամյա, իսկ 2003 թ.-ին, կառավարության թիվ 1392-Ն որոշմամբ, դարձել է հիմնական: Դպրոցի շենքը ի սկզբանե կիսավեր, խարխուլ կառույց էր գյուղի ծայրին: 1999 թ.-ին՝ Հունաստանի հայ համայնքի բարեգործության շնորհիվ, դպրոցի համար գնվել է քարակերտ նոր

շենք: 2013 թ.-ին դպրոցն անվանակոչվել է Նեղոց գյուղի բնակիչ Արթուր Բեգջանյանի անունով, ով հերոսաբար զոհվել է Ղարաբաղյան ազատամարտի ժամանակ: Դպրոցը երկհարկանի է, ոչ տիպային, 430,5 $մ^2$ տարածքով և 0,3 հա բակային տարածքով:

## ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| N | Անվանումը | Քանակը | Մակերեսը՝ ք/մ |
|---|---|---|---|
| 1. | 1-ին դաս.-ի դասասենյակ | 1 | 9 |
| 2. | 2-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 19 |
| 3. | 3-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 17 |
| 4. | 4-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 17 |
| 5. | 5-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 20 |
| 6. | 6-րդ դաս.-ի դասասենյակ /հանդիսությունների դահլիճ | 1 | 52 |
| 7. | 7-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 20 |
| 8. | 8-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 16 |
| 9. | 9-րդ դաս.-ի դասասենյակ | 1 | 16 |
| 10. | Արմաթ ինժեներական լաբորատորիա /համակարգչային դասարան | 1 | 30 |
| 11. | Նախակրթարան | 1 | 34 |
| 12. | Խոհանոց | 1 | 25 |
| 13. | Ուսուցչանոց | 1 | 25 |
| 14. | Տնօրենի աշխատասենյակ | 1 | 14 |
| 15. | Հաշվապահի աշխատասենյակ | 1 | 10 |
| 16. | Կաթսայատուն | 1 | 13 |
| 17. | Սանհանգույց | 2 | 12 |
| 18. | Գրադարան | 1 | 12 |
| 19. | Միջանցքներ | 4 | 70 |

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը | Սեղան-նստարանների թիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները /սմ/ |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N5 | 30 | շարքերով | 7-14 | 50 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N6 | 20 | շարքերով | 6-12 | 50 |
| Դասասենյակ N7 | 9 | շարքերով | 2-4 | 50 |
| Դասասենյակ N 8 | 16 | շարքերով | 4-8 | 50 |
| Դասասենյակ N11 | 19 | շարքերով | 5-10 | 50 |
| Դասասենյակ N15 | 17 | շարքերով | 5-10 | 50 |
| ԴասասենյակN 16 | 17 | շարքերով | 5-10 | 50 |
| Դասասենյակ N17 | 20 | շարքերով | 6-12 | 50 |
| Դասասենյակ N18 | 16 | շարքերով | 4-8 | 50 |

## ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

| h/h | Ապրանքանյութական արժեքների անվանումը, տեսակը, խումբը | Քանակ |
|---|---|---|
| 1. | Համակարգիչ | 8 |
| 2. | Սկաներ | 1 |
| 3. | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 3 |
| 4. | Տպիչ | 1 |
| 5. | Տեսացրիչ (պրոյեկտոր) | 1 |
| 6. | Համակարգչի հավաքածու | 7 |
| 7. | Եռաչափ տպիչ Բզեզ 2.0 | 1 |
| 8. | Փոշեկուլ | 1 |
| 9. | Ռոբոտ-կոնստր. հիմն.հավաքածու | 1 |
| 10. | Նորացմ. ու գործ. լրաց. հավաքածու | 1 |
| 11. | Ռոբոտի մեխանիկական և էլեկտրոնային հանգույց. լրացուցիչ հավաքածու | 1 |
| 12. | Ավտոմատաց. և էլեկտ. ընդլայնման | 1 |
| 13. | Թվային կառավ. Ծաղափային և | 1 |
| 14. | Աշակերտ. սեղան | 58 |
| 15. | Աշակերտական աթոռ | 118 |
| 16. | Գրատախտակ | 8 |
| 17. | Ուսուցչի սեղան | 6 |
| 18. | Բազմոց | 1 |
| 19. | Գրապահարան | 5 |
| 20. | Ջերմաչափ Termometr | 2 |
| 21. | Դյուրակիր համակարգիչ | 1 |

| | | |
|---|---|---|
| **22.** | Wi-Fi ցրիչ | 1 |
| **23.** | Սալօջախ էլ. 4 աչք ջեռոցով 220Վ Stove | 1 |
| **24.** | Կոնվեկցիոն ջեռոց 220Վ /Mini | 1 |
| **25.** | Ջրատաքացուցիչ 30լ/Hot water | 1 |
| **26.** | Սառնարան BIRUSA 135 | 1 |
| **27.** | Կենցաղային կշեռք | 1 |
| **28.** | Ջեռուցման համակարգ <<Murino>> | 1 |
| **29.** | UPS 650 va | 3 |
| **30.** | Բարձրախոս | 1 |
| **31.** | Պահարան | 4 |

## Հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|---|
| ➢ Շենքը բարեկարգ է, դասասենյակները վերանորոգված են և կահավորված:<br>➢ 2022 թ. -ից շենքը ջեռուցվում է անհատական ջեռուցման համակարգով՝ դասասենյակներում և միջանցքներում ապահովելով պահանջվող ջերմաստիճանը:<br>➢ Առկա է շուրջօրյա ջրամատակարարում՝ տաք և սառը ջրի առկայությամբ, սանիտարահիգենիկ պայմանների լիարժեք ապահովմամբ:<br>➢ Դպրոցն ունի ընդարձակ, բարեկարգ բակ (0,3 հա), ծառերով և ծաղկանոցներով:<br>➢ 2019 թ. -ին ամբողջությամբ վերանորոգվել է շենքի տանիքը:<br>➢ Բարերարների միջոցով 2022 թ. -ին վերանորոգվել է դպրոցի 2-րդ հարկի միջանցքը, սալիկապատվել է հատակը:<br>➢ Շենքի բոլոր լուսամուտները, սենյակների և մուտքի դռները նոր են:<br>➢ Սանհանգույցները վերանորոգված են:<br>➢ Ամբողջապես վերանորոգված է դպրոցաhեն նախակրթարանի տարածքը, կահավորված՝ համակարգչի, հեռուստացույցի և ինտերնետային կապի առկայությամբ: | ➢ Ոչ տիպային շենք է, մակերեսը՝ փոքր (430,5մ$^2$):<br>➢ Դպրոցը չունի մարզադահլիճ:<br>➢ Տարածքի սղության պատճառով դպրոցում չկան շախմատի, ՆԶՊ-ի դասասենյակներ, զենքի պահպանման սենյակ:<br>➢ Շենքը չունի նկուղային հարկ և թաքստոց:<br>➢ Դպրոցը կարիք ունի նաև նոր հանդիսությունների դահլիճի, քանի որ ներկայիս դահլիճն օգտագործվում է որպես դասասենյակ, բեմը վերանորոգման կարիք ունի:<br>➢ Ընդարձակ, վերանորոգված գրադարանի և ընթերցասրահի բացակայություն:<br>➢ Տարածքը չունի պահեստային մաս և ավելացած կամ չօգտագործվող գույքը, դպրոցին անհրաժեշտ այլ իրեր պահպանելու խնդիր է առաջանում:<br>➢ Բացակայում է տարածք, որը հնարավոր կլիներ հատկացնել լաբորատորիաների համար և կահավորել ժամանակակից պահանջներին համապատասխան:<br>➢ Շենքը և սանհանգույցները հարմարեցված չեն |

| | |
|---|---|
| ➢ Առկա է ճաշարան:<br>➢ Ուսուցչանոցը և վարչական սենյակները նույնպես վերանորոգված են, կահավորված նոր գույքով:<br>➢ Վերանորոգված է նաև դպրոցում գործող «Արմաթ» ինժեներատեխնիկական լաբորատորիայի ողջ տարածքը:<br>➢ Ողջ տարածքը պարսպապատված և ցանկապատված է՝ ապահովելով անվտանգ միջավայր:<br>➢ Բակի տարածքն օգտագործվում է որպես բացօթյա մարզահրապարակ: Առկա է վազքուղի, բասկետբոլի, վոլեյբոլի խաղահրապարակներ, ՆԶՊ առարկայի շարային վարժությունների համար գծանշումներ: | հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար՝ բացառությամբ 1-ին հարկի թեքահարթակից: |
| **Հնարավորությունները** | **Սպառնալիքներ** |
| ➢ Դպրոցը տեղակայված է միջպետական մայրուղու անմիջական հարևանությամբ, տրանսպորտային բանուկ տարածքում, ինչը մեծացնում է դպրոցի հասանելիությունը թե՛սովորողների, թե՛ աշխատակազմի<br>➢ համար:Հնարավորություն ստեղծելով համալրել աշխատակազմը այլ բնակավայրերից եկող աշխատողներով:<br>➢ Դպրոցը գտնվում է Հայաստանի ամենաարևոտ վայրերից մեկում և տարվա 10 ամիսն արևային է: Այդ առավելությունը կարելի է ճիշտ օգտագործել և տեղադրել արևային էներգակիրներ:<br>➢ Տարածքը հարթ է, ասֆալտապատ և կարելի է այդտեղ հեշտությամբ կառուցել այդքան անհրաժեշտ, բացակայող կառույցները: | ➢ Դպրոցը ենթակա է միավորման<br>➢ Միջպետական մայրուղուն մոտ գտնվելը՝ դեռևս մայրուղին ամբողջությամբ չի կահավորվել, տեղադրված չեն ցուցանակներ, բացակայում են գծանշումները՝ ճանապարհն անվտանգ չէ անցնելու համար:<br>➢ Հանդիսանալով միավորվող դպրոց՝ ֆինանսական միջոցներ գրեթե չեն հատկացվում շենքի պահպանության համար: |

## Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծություն

| Ուժեղ | Թույլ |
|---|---|
| ➢ Դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներատեխնիկական լաբորատորիա՝ համապատասխան գույքային և նյութատեխնիկական բազայով:<br>➢ Խոհանոցի առկայություն՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով, սպասքով և գույքով: Դպրոցը 2023թ.-ին ԿԳՄՍ նախարարության կողմից հայտարարված մրցույթում շահել է 1 մլն 200 000 դրամ, որը ուղղվելու է ճաշարանի գույքի և խոհանոցային տեխնիկայի հարստացմանը:<br>➢ Համակարգչային սենյակ՝ 6 համակարգիչների առկայությամբ, որոնցից 1-ը դյուրակիր, ինչպես նաև պատճենահանող, տպիչ, տեսածրող սարքերով, առկա է նաև էկրան և պրոյեկտոր:<br>➢ Ինտերնետային կապի առկայություն դպրոցի ողջ տարածքում և դասասենյակներում:<br>➢ Բոլոր դասասենյակներում առկա են պահարաններ, ուսուցչական սեղաններ, աշակերտական գույքը նոր է և գտնվում է լավ վիճակում:<br>➢ Առկա են առարկայական պաստառներ, քարտեզներ, ատլասներ, գլոբուսներ, դիդակտիկ նյութեր, ցուցանմուշներ, սակայն շենքային պայմանները թույլ չեն տալիս, որ դպրոցում ունենանք առարկայական սենյակներ: | ➢ Գրադարանի, ընթերցասրահի համար չկա տարածքի տրամադրման հնարավորություն, գրքերի մեծ մասը հին են և չեն համապատասխանում դպրոցական ծրագրային նյութին:<br>➢ Լաբորատոր ժամանակակից սարքավորումների, նյութերի և դրանց համար հատկացվող տարածքի բացակայություն:<br>➢ ԿԱՊԿՈւ աշակերտների համար առանձին ուսումնական դասասենյակի բացակայություն՝ իր նյութատեխնիկական բազայով:<br>➢ Շախմատի, ՆԶՊ-ի, զենքի պահպանման սենյակի և այլ առարկայական դասասենյակների բացակայություն: |

| | |
|---|---|
| ➢ Բոլոր աշխատասենյակներում, ուսուցչանոցում առկա են համակարգիչներ, տպիչ սարքեր, նախակրթարանում նաև՝ հեռուստացույց և նվագարկիչ:<br>➢ Մարզագույքից առկա են գնդակներ, մարզական ներքնակ, ցատկապարաններ, ձեռքի թենիս, օղակներ:<br>➢ Շենքի տարբեր հատվածներում փակցված են հրդեհաշիջման թվով 6 կրակմարիչներ:<br>➢ Դպրոցը ապահովված է անվտանգության համակարգերով՝ տարածքը և բակը տեսահսկվում է, առկա է ձայնային ազդանշանային համակարգ: | |

## Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

Դպրոցի ճիշտ կառավարման կարևոր ուղղություններից է նաև ֆինանսական միջոցների ճիշտ և արդյունավետ կառավարումը: Դպրոցը սուբսիդավորվում է պետական բյուջեից, որի հատկացումներից էլ ձևավորվում է դպրոցի բյուջեն:

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են.

1. աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները,
2. դպրոցի պահպանման ծախսերը,
3. նպատակային միջոցների և նյութերի ձեռքբերումը,
4. այլ ծախսեր:

Քանի որ դպրոցը ներառված է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում, ֆինանսավորման նոր պահանջները չեն անդրադառնում մեր դպրոցի վրա, դպրոցը շարունակում է ֆինանսավորվել աշակերտների թվով: Իսկ ֆինանսավորման այդ տեսակը մարտահրավերային է հատկապես այսպիսի փոքր դպրոցների համար:




Ինչպես երևում է 2030-2023 թթ ֆինասավորման գծանկարից պետական ֆինանսավորումը բավարարում է աշխատակազմի աշխատավարձային, կոմունալ և պարտադիր այլ վճարումների իրականացման համար և չի կարող բավարարել կազմակերպության զարգացմանն ուղղված անհրաժեշտ ծախսերին: Ուստի անհրաժեշտ է դառնում այլ աղբյուրերից ֆինանսների ներգրավման անհրաժեշտությունը:



Դիագրամներից երևում է, որ ֆինանսական միջոցների աճն ուղիղ համեմատական է դպրոցում աշակերտների, աշխատողների թվի, դասարանների քանակի, ժամաքանակի ավելացմանը: Սա էլ իր հերթին կապված է դպրոցական միջավայրի բարելավման հետ՝ կատարած ծախսերը, նյութատեխնիկական բազայի հարստացումը, անվտանգ միջավայրի ստեղծումն ապահովում է աճ կրթադաստիարակչական գործընթացում՝ ուղիղ ազդելով որակի վրա: Դպրոցում ստեղծված անվտանգ, բարեկարգ միջավայրի, նյութատեխնիկական բազայի առկայության շնորհիվ տեղի ունեցավ աշակերտների ներհոսք նաև հարակից համայնքներից: Դրա շնորհիվ դպրոցում ավելացավ դասարանների թիվը (նախկինում կային երկկոմպլեկտ դասարաններ), ավելացավ ժամաքանակը, հետևաբար նաև ուսուցիչների ծանրաբեռնվածությունը (միջինը 15 ժ), ինչը մոտիվացնող եղավ և ապահովեց ուսուցչական կազմի կայունություն: Ուսուցչի մեկ լրիվ դրույքը կազմում է 121484 դր. , ուսուցիչ- աշակերտ հարաբերությունը կազմում է 1/4:

Ֆինանսական փաստաթղթերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ծախսային ուղղություններում ավելացել է ուսումնական նպատակով գույքի, տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված ծախսը, որի շնորհիվ 2020 թ. -ից առ այսօր դպրոցը ձեռք է բերել տեսացրիչ/պրոյեկտոր/, էկրան, 3 համակարգիչ (1-ը դյուրակիր), 2 տպիչ սարք, 5 պահարան, 4 ուսուցչի սեղան, բարձրախոս:

Դպրոցը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում, սակայն 2018 թ. -ից մինչև 2023 թ. -նն ունեցել ենք բարերարների մեծ թիմ (Ախթալայի ԼՀԿ, Թեղուտ ՓԲԸ, համագյուղացի գործարար Վահան Բեգջանյան, Ախթալայի հոգևոր հովիվ Տեր Հեթում քահանան, ԱՄՆ-ի Ռոդ Այլենդի հայկական համայնք), որոնց միջոցներով վերանորոգվել են դասասենյակներ, գնվել է գույք, տեխնիկա, վառելափայտ, փոխհատուցվել են տրանսպորտային ծախսերը, ամբողջությամբ վերանորոգվել և սալիկապատվել է դպրոցի երկրորդ հարկի միջանցքը:

2023 թ. -ի դեկտեմբերին դպրոցը հաղթել է «Հայաստանի լավագույն դպրոցական մինի այգի» ծրագրում, որի արդյունքում դպրոցին հատկացվել է 1 մլն 217000 դրամ, ինչը ևս նախատեսվում է օգտագործել դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար:

Դպրոցը ապահովում է թափանցիկ գործելաոճ՝ տարեկան և ճշտված նախահաշիվները, եռամսյակային հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքէջում:

| Ուժեղ | Թույլ |
|---|---|
| ➢ Ֆինանսավորումը կայուն է և ժամանակին:<br>➢ Դպրոցում առկա գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում:<br>➢ Բյուջետային տարվա կտրվածքով առկա չեն | ➢ Ֆինանսավորման ոչ բավարար չափը, աշակերտների թվով ֆինանսավորումը խիստ սահմանափակ հնարավորություններ է տալիս:<br>➢ Ֆինանսական միջոցների 90 %-ից ավելին հատկացվում է |

| | |
|---|---|
| գերածախս և պարտք:<br>➢ Յուրաքանչյուր տարի միջինը 72000 դրամ հատկացվում է ուսուցիչների վերապատրաստման համար:<br>➢ Դպրոցի 19 մանկավարժներց 13-ը օգտվում են տրանսպորտային փոխհատուցման ծրագրից: | աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին և կոմունալ ծախսերին:<br>➢ Ֆինանսական սուղ միջոցների պատճառով դպրոցում չկան մի շարք հաստիքներ՝ փոխտնօրեն,ՄԿԱ տեղակալ, գրադարանավար, հոգեբան, բանվոր,գործավար ինչն իր բացասական ազդեցությունն է ունենում աշխատանքների ճիշտ կազմակերպման գործում: |

## Դպրոցում առկա հիմնախնդիրները

Այսպիսով, հիմք ընդունելով իրավիճակի վերլուծության արդյունքները՝ առանձնացվել են Նեղոցի հիմնական դպրոցում առկա հետևյալ հիմնախնդիրները.

- ❖ Հաստիքակազմի համալրում՝ նոր չափորոշչային կրթությունն արդյունավետ կազմակերպելու համար (խմբակ, երկարօրյա, նախագիծ):
- ❖ Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում՝ ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան:
- ❖ Շենքային պայմանների բարելավում՝ պակասող ենթակառուցվածքների կառուցում (գրադարան, մարզադահլիճ, լաբորատորիաներ, ընթերցասրահ):
- ❖ Ուսուցիչների ինքնակրթվելու և ոլորտային փոփոխություններին արագ արձագանքելու կարողությունների զարգացում :
- ❖ Համագործակցային կապերի զարգացում բոլոր ոլորտներում (ծնողական, համայնքային, մանկավարժական, կրթության կառավարման մարմինների հետ):
- ❖ Չափորոշչային կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացում:

Առկա հիմնախնդիրների լուծումները թույլ կտան.

- ❖ Ունենալ բավարար մարդկային ռեսուրսներ՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու և վերահսկելու համար:
- ❖ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող կրթական միջավայր՝ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայությամբ:
- ❖ Իրազեկ ուսուցչական կազմ՝ ժամանակի կրթական կարիքները բավարարող կարողություններով:
- ❖ Արդյունավետ համագործակցությունների առկայությունը թույլ կտա հեշտությամբ լուծել առաջացած խնդիրները, ճիշտ աշխատել և նպաստել դպրոցի զարգացմանը:

- Չափորոշչային կրթություն ապահովելը թույլ կտա ձևավորել ժամանակի պահանջներին համապատասխան կարողություններով ձևավորված քաղաքացի:

### *Հիմնախնդիրների լուծմանն ուղղված խնդիրների քայլաշար*

- ✓ Ավելացնել ՏՀՏ գործիքակազմի կիրառությունը կրթական բոլոր բնագավառներում:
- ✓ Ավելացնել և կատարելագործել նյութատեխնիկական բազան՝ ապահովելով ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան պահանջներ:
- ✓ Ուղղորդել ուսուցիչներին՝ շարունակաբար կատարելագործելու իրենց գիտելիքը՝ մասնակցելով որակավորման տարակարգ ստանալուն, կամավոր ատեստավորմանը, տարբեր վերապատրաստումների և սեմինարների:
- ✓ Ապահովել չափորոշչահեն կրթություն՝ կարևորելով ոչ միայն գիտելիքը, այլև կարողությունները:
- ✓ Ապահովել բազմակարծիք, համագործակցային, ստեղծագործական աշխատանքային մթնոլորտ:
- ✓ Համայնքին, ծնողական համայնքին, հասարակական կրթական տարբեր կազմակերպություններին ներգրավել կրթական գործընթացի մեջ. կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, բանավեճեր:
- ✓ Երեխաներին ընդունակ դարձնել զարգացնելու իր գիտելիքը նաև առանց ուսուցչի օգնության:
- ✓ Ստեղծել ԿԱՊԿՈՒ աշակերտների առանձնահատկություններին հարմարեցված միջավայր:
- ✓ Աշխատանքներ տանել լաբորատորիաների, առարկայական կաբինետների, գրադարանի ստեղծման, վերազինման և արդիականացման ուղղությամբ:
- ✓ Ճիշտ և արդյունավետ ղեկավարում և վերահսկողություն իրականացնել բոլոր մակարդակներում (մ/մ նախագահներ, դասղեկներ, մանկավարժական այլ աշխատողներ):

Այս ամենը իրագործելու ու ապահովելու համար սույն զարգացման ծրագրում սահմանել եմ նպատակներ /երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ/, դրանցից բխող խնդիրներ ու համապատասխան գործողություններ, որոնք նկարագրված են ստորև:

Քանի որ Նեղոցի հիմնական դպրոցն՝ ըստ ԿԳՄՍ նախարարի հրամանի, ներառված է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում և սահմանված ժամկետում (2026-2028թթ.) ենթակա է միավորման Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի հետ, շենքային պայմանների բարելավման ծախսեր և ներդրումներ չեն իրականացվում: Ըստ վերոնշյալ ծրագրի պահանջների չի թույլատրվում կամ նվազագույնի է հասցվում շենքային ծախսերը: Ուստի նպատակահարմար և իրատեսական չէ անդրադառնալ ուսումնական հաստատության շենքային խնդիրներին:

## Նպատակներ և խնդիրներ, դրանց իրականացման գործողություններ, ժամկետներ, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, հնարավոր ռիսկեր և դրանց կանխման գործողություններ

| N | Նպատակ | Խնդիրներ | Գործողություններ | Ժամկետ | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** | Պետական կրթական քաղաքականության համահունչ և չափորոշչահեն կրթության ապահովում **/երկրաժամկետ նպատակ/** | 1. Չափորոշչային պահանջների վերջնարդյունքների ապահովում | 1. Կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում՝<br>-հրազեկող հանդիպումներ<br>-վարպետաց դասեր<br>-փորձի փոխանակման քննարկումներ<br>-Համատեղ դասավանդման փորձեր | 2024-2029 թթ. շարունակաբար, ըստ տարեկան աշխատանքների պլանի | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջում:<br><br>Միջոցներ և ռեսուրսներ՝ մարդկային ռեսուրս՝ մենթորներ, փորձառու ուսուցիչներ, ՀՊՉ, առարկայական և օրվա պլաններ | **Քանակական**<br>Իրականացված միջոցառումների քանակ և պարբերություն:<br>**Որակական-**<br>Ուսուցման արդի տեխնոլոգիաների կիրառմամբ, չափորոշչային պահանջներին համապատասխան ուսուցման գործընթացի կազմակերպում, մոտիվացված ուսուցիչներ: | Ուսուցիչների, մանկավարժական աշխատողների պասիվություն, մոտիվացիայի պակաս: Նյութատեխնիկական ռեսուրսների անբավարարություն: | Խրախուսման միջոցների կիրառություն, առցանց ուսումնական նյութերի կիրառություն: ԿԶՆԱԿ հիմնադրամի կայքէջում տեղադրված լուսաբանող, մեթոդական նյութերի կիրառում: |
| | | | 2. Յուրաքանչյուր կիսամյակ սովորողների | 2024-2029 թթ. շարունա | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջում: | **Քանակական**<br>Յուրաքանչյուր դասարանում | Ուսումնառության արդյունքների | Խրախուսում, ներդպրոցական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մնացորդային գիտելիքի ստուգում | կաբար, ըստ ՆԴՎ-ի, յուրաքանյուր կիսամյակ մեկ անգամ | Միջոցներ և ռեսուրսներ՝ տնօրենություն կամ մեթոդական առարկայախմբի ղեկավար, համապատասխան թեստ, հարցաշար, համապատասխան ժամանակացույց | յուրաքանյուր կիսամյակ մեկ անգամ յուրաքանյուր առարկայից մնացորդային գիտելիքների ստուգում:<br><br>**Որակական** Մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքում միջին գնահատականի առնվազն 6,5 միավոր: | նկատմամբ սովորողների, ուսուցիչների և ծնողների անտարբերություն, թերահավատություն, ոչ ճիշտ արժևորում: | վերահսկողության կազմակերպում, մշտադիտարկումներ: |
| | | | 3. Երկարօրյա ուսուցման կազմակերպում (ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ուսուցման կազմակերպում): | 2024-2029 թթ. շարունակաբար, ըստ առաջնահերթության | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե Միջոցներ և ռեսուրսներ՝ տարածքներ, մարդկային ռեսուրս, ծրագրեր, առաջադիմության թերթիկներ | **Քանակական-** ցածր առաջադիմություն ունեցող բոլոր երեխաների (100 տոկոս) ընդգրկում երկարօրյա աջակցության ծրագրերում:<br>**Որակական -** Ամենօրյա լրացուցիչ դասընթացների կազմակերպում, Արտադպրոցակ | Ուսումնառության արդյունքների նկատմամբ սովորողների անտարբերություն, ուսուցիչների մոտիվացիայի պակաս, ֆինանսական միջոցների սղություն: | Սովորողների, ուսուցիչների խրախուսում, ծնողական համայնքի կողմից ներդրումների իրականացում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ան խմբակների կազմակերպում, Աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությ ան ապահովում, կրկնուսուցման անհրաժեշտությ ան նվեզեցում: Առաջադիմությա ն ցուցանիշների բարելավում: | | |
| | | 2. Խմբակների, նախագծային աշխատանքնե րի ճիշտ կազմակերպում | 1. Նախագծային աշխատանքների կազմակերպում: -Հաստատված ծրագրերի առկայություն: -Սովորողների նախասիրություննե րին և կարողություններին համապատասխան ություն: -Նախադրյալների ճիշտ բացահայտում և ուղղորդում: | 2024-2029 թթ. շարունա կաբար, ըստ առաջնա հերթությ ան | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, Միջոցներ և ռեսուրսներ՝ Համակարգիչն եր, նախագծային ուսուցումն իրականացնող մանկավարժա կան կազմ, նախագծային աշխատանքի համապատաս խան պլան | **Քանակական**- պարտադիր նախագծային ուսուցում իրականացնելու ենթակա դասարաններում բոլոր աշակերտների նախագծում ընդգրկում:<br><br>**Որակական** Նախագծային աշխատանքներո ւմ ընդգրկված սովորողների ուսումնառությա ն արդյունքների | Ուսուցիչների և սովորողների կողմից նախագծային ուսուցման ու ուսումնառությ ան փորձի պակաս: | Փորձի փոխանակմա ն, տեղեկատվակ ան հանդիպումնե րի կազմակերպո ւմ համայքին հարակից այլ դպրոցների հետ: Նախագծային ուսուցման վերաբերյալ սեմինարների, դասընթացնե րի, վերապատրա |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աճ, սովորելուն մոտիվացված աշակերտներ: | | ստումների մասնակցությ ան ապահովում: |
| | | | 2. Խմբակների կազմակերպում և արդյունավետ կիրառում: | 2024-2029թթ. շարունակաբար | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, Միջոցներ և ռեսուրսներ՝ Համապատասխան մասնագիտական կրթությամբ խմբակավարներ, խմբակի երաշխավորված ծրագիր | **Քանակական**- խմբակներում ընդգրկված աշակերտների թիվը, **Որակական** Համայնքում կրթամշակութային կյանքի ակիվացումը, աշակերտների նախասիրությունների շրջանակի ընդլայնումը: | Սովորողների նախասիրությունների ոչ ճիշտ բացահայտում: Ֆինանսական միջոցների սղություն: Սովորողների մոտիվացիայի պակաս: | Սովորողների շրջանում հարցման իրականացում: Սովորողների խրախուսման միջոցների կիրառում: Ծնողական համայնքի կողմից ֆինանսական աջակցություն: |
| | | | 3. Միջոցառումների, վիկտորինաների, խաղերի և մրցույթների կազմակերպում: | 2024-2029 թթ.՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, բարերարներ, հասարակական կազմակերպություններ, արտաքին գործընկերներ: Միջոցներ և ռեսուրսներ՝ անհրաժեշտ պարագաներ, գույք, տարածք, | **Քանակական-** միջոցառումներում ընդգրկված աշակերտների թիվը, սպորտային, մշակութային, կրթական միջոցառումներում ձեռքբերումների, հաղթանակների թիվը **Որակական-** Համայնքում միջոցառումների | Ֆինանսական միջոցների սղություն: Սովորողների մոտիվացիայի պակաս: Մանկավարժական աշխատողների նախաձեռնողականության պակաս: | Բարերարների, հասարակական կազմակերպությունների, արտաքին գործընկերների աջակցություն: Մանկավարժական աշխատողներին խրախուսման |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մարդկային ռեսուրսներ: | ակտիվացումը, աշակերտների նախասիրություն ների շրջանակի ընդլայնումը, ինքնագնահատ ակնի բարձրացումը: | | մեխանիզմինե րի կիրառում: |
| | | 3. ԿԱՊԿՈւ աշակերտներ ի կրթական կարիքի ճիշտ սահմանում և համապատաս խան կրթության ապահովում: | 1. -ԱՈւՊ-ի ճիշտ վարում: -ՏՄԱԿ-ի հետ համագործակցությ ուն: -Ծնողի ներգրավածության ապահովում: | 2024-2029 թթ. Կրթակա ն աստիճա նի սկիզբ, ՏՄԱԿ-ի հետ համագո րծակցու թյան ժամանա կացույցե րի համաձա յն | Ֆինանսական միջոցներ՝ պետ. բյուջե Միջոցներ և ռեսուրսներ՝ Համագործակց ություն ՏՄԱԿի հետ: Վերապատրաս տված մասնագետներ , աջակցող մասնագետներ ի եզրակացությո ւնը, բժշկական եզրակացությո ւնը, աջակցող տեխնոլոգիանե րի ցանկ | **Քանակական**- ՏՄԱԿ-ի մասնագետների հետ աշխատանք ըստ երեխայի կարիքի գնահատման եզրակացության և սահմանված աջակցության ծավալի: Գնահատված բոլոր երեխաների համար: **Որակական -** Համատեղ ուսուցման կազմակերպում, ԿԱՊԿՈՒ աշակերտների և նրանց ծնողի կամ օգնականի առավելագույն ներգրավածությո ւն դասընթացին: | Ուսուցիչների կողմից իրականացվող մեծածավալ աշխատանքից խուսափում: ԱՈՒՊ-ի ճիշտ վարման փորձի պակաս: Ծնողների պասիվություն: | Ուսուցիչների համար վերապատրա ստումների կազմակերպու մ, փորձառու ուսուցիչների կողմից փորձի փոխանակում , ծնողների համար տեղեկատվակ ան հանդիպումնե րի, ծնողավարմա ն դասընթացնե րի կազմակերպո ւմ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. Օլիմպիական խմբակների ստեղծում | 2026-2029 թթ 2 կիսամյակ տևողությամբ | Ծրագրեր, աշխատանքային պլան կիսամյակի համար, անհրաժեշտ նյութեր, դասավանդող՝ համապատասխան մասնագիտական կարողություններով օժտված ուսուցիչ | Քանակական Առարկայական օլիմպիադաների, մրցույթներին սովորողների մասնակցության, աճ:<br><br>Որակական Առարկայական օլիմպիադաներում, մրցույթներում /Արջուկ, Կենգուրու, Մեղու, Կորիզ և այլն/ սովորողների կողմից գրանցած հաջողություններ ու արդյունքների աճ: | Սովորողների մոտիվացիայի պակաս: Համապատասխան մասնագետներ ի /ներքին/ պակաս: | Համագործակցություն համայքին կից այլ ուսումնական հաստատությունների հետ: Սովորողների խրախուսման մեխանիզմներ ի կիրառում: |
| **2.** | Բազմակարծիք, համագործակցային, մասնակցային ու անվտանգ դպրոցական միջավայրի ձևավորում: **/կարճաժամ** | 1. Համագործակցային և բազմակարծիք միջավայրի ապահովում | 1. Բռնության դեպքերի կանխարգելման միջոցառումների իրականացում | 2024-2029թթ՝ Խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջում:<br><br>Նյութատեխնիկական պարագաներ՝ չի պահանջում Ռեսուրսներ՝ համագործակցություն, | **Քանակական-** բոլոր աշակերտներ (100 տոկոս), միջադեպերի, բռնության դրսևորումներ պարունակող դեպքերի նվազեցում առնվազն 20 | Դեռահասության տարիքին բնորոշ ագրեսիվ, անհանդուրժող վարքագծի դրսևորումներ: | Մանկավարժական աշխատողներ ի բարեխիղճ, համագործակցային աշխատանք: Բացատրողական ու հետևողական աշխատանքն |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **կետ կամ միջնաժամկետ նպատակ՝** կախված առանձին ծրագրերի տևողությունից/ | | | ռազմավարության ժամանակացույցերին համապատասխան | մենթոր դպրոցի հետ, հանդիպումներ մասնագետների հետ՝ հոգեբան, ռոստիկան, բժիշկ | տոկոսով: **Որակական-** Առավել հանդուրժողական միջավայր, փոխօգնության և հարգանքի վրա կառուցվող հարաբերություններ աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում: | | երի իրականացում: |
| | | | 2. Ուսումնառության մեջ աշակերտակենտրոն մոտեցման ուժեղացում | 2024-2029թ՝պարբերաբար | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջվում: Ռեսուրսներ՝ մանկավարժական հմուտ անձնակազմ, անանուն հացարաններ, ներքին կարգապահական կանոններ | **Քանակական-** կրթություն բոլոր աշակերտների համար (100 տոկոս), **Որակական** աշակերտների հետաքրքրությունները, նախասիրությունները վերհանող գործիքների կիրառում, ուսուցման մեթոդների և հնարների բազմազանություն: | Տարեց ուսուցիչների մոտ կարծրատիպերի առկայություն: | Անհրաժեշտ վերապատրաստումների, փորձի փոխանակման կազմակերպում, կարծրատիպերի կոտրում: |
| | | 2. Դրական | 1. Սովորողների | 2024- | Ֆինանսական | **Քանակական-** | Անբավարար | Հովանավորն |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վարքագծի ամրապնդում, մոտիվացիայի բարձրացում | սպորտային, մշակութային և ուսումնական հաջողությունների խրախուսում | 2029թթ. պարբեր աբար՝ կիսամյա կային կամ տարեկե ռջյան | միջոցներ՝ ՏՀՄ, արտաբյուջե Նյութատեխնի կական պարագաներ՝ դպրոցի սոցիալական էջ, պատվոգրեր, շնորհակալագր եր, հուշանվերներ, ներքին կարգապահակ ան կանոններ | վարքականոնների խախտումների նվազում մինչև 20 տոկոս, բացակայություն ների քանակի նվազում մինչև 20 տոկոս:<br><br>**Որակական-** Դրական վարքագծով, մոտիվացված սովորողներ: | ֆինանսական միջոցներ: | երի, համայնքապե տարանի աջակցություն , ձեռնարկատի րական գործընկերությ ուն: |
| | | | 2. Բուլինգից զերծ միջավայրի ապահովում:<br>-Տեսաֆիլմերի, տեսանյութերի դիտում<br>-Զրույցներ, քննարկումներ<br>-Աշխատանք ծնողական համայնքի հետ<br>-Աշխատանք աշակերտական խորհրդի հետ: | 2024-2029 թթ. տերեկա ն 2 փուլով՝ հոկտեմբ եր և ապրիլ ամիսներ ին | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջում:<br><br>Նյութատեխնի կական պարագաներ՝ ֆիլմի դիտում, անանուն հարցարաններ Ռեսուրսներ՝ մարդկային ռեսուրսներ՝ հոգեբան, ոստիկան, բժիշկ, ֆիլմադարանն եր, բանավեճի ակումբ | **Քանակական-** Բուլինգ պարունակող կարգապահակա ն խախտումների, բռնության դրսևորումներ պարունակող դեպքերի նվազեցում առնվազն 20 տոկոսով:<br><br>**Որակական-** Առավել հանդուրժողակա ն միջավայր, փոխօգնության | Դեռահասությ ան տարիքին բնորոշ վարքագծի որոշ բացասական դրսևորումներ: | Մանկավարժ ական աշխատողներ ի բարեխիղճ, համագործակ ցային աշխատանք: Բացատրողա կան ու հետևողական աշխատանքն երի իրականացու մ: Համագործակ ցություն ծնողական համայնքի հետ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | և հարգանքի վրա կառուցվող հարաբերություններ աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում: | | |
| | | 3. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար խելամիտ հարմարեցումների ստեղծում: | 1. Ռեսուրսային դասասենյակի ստեղծում՝ իր նյութատեխնիկական բազայով: | 2024-2026թթ. ըստ գնահատման արդյունքների և կարիքիս ամանման՝ յուրաքանչյուր տարվա սկիզբ | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, բարերարներ, հասարակական կազմակերպություններ, արտաքին գործընկերներ: Միջոցներ և ռեսուրսներ՝ անհրաժեշտ պարագաներ, գույք, տարածք, ԱՈւՊ: | **Քանակական-** ԿԱՊԿՈՒ երեխաների հաճախումներ թիվը (բացակայությունների նվազումը), կրթական գործընթացների մասնակցության տոկոսի բարձրացում, համատեղ միջոցառումների մասնակցության ցուցանիշների ավելացում **Որակական** երեխաների վարքի մեղմացում, ինքնուրույնությ | Ֆինանսական միջոցների սղություն: Կարծրատիպերի առկայություն: | Հովանավորների, համայնքապետարանի աջակցություն, ձեռնարկատիրական գործընեության: Կարծրատիպերը կոտրելուն ուղղված միջոցառումների իրականացում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ան մեծացում | | |
| | | | 2. ՏՄԱԿ-ի հետ աշխատանքների արդյունավետությա ն բարձրացում | 2024-2029թթ. շարունա կական՝ կրթակա ն յուրաքա նչյուր աստիճա նից առաջ, յուրաքա նչյուր տարեսկ իզբ | Ֆինանսական միջոցներ՝ չեն պահանջվում: Նյութատեխնի կական պարագաներ՝ աշխատանքայ ին սենյակ՝ համապատաս խան դիդակտիկ նյութերով և կահավորմամբ: | **Քանակական** պլանավորված աշխատանքների ծավալը (100 տոկոս), ԿԱՊԿ ունեցող երեխաների բացակայություն ների թիվը, համադասարան ցիների հետ կոնֆլիկտների քանակը **որակական** երեխայի առաջընթացը, հաջողությունները: | Գործընկերներ ի ցածր մոտիվացիան, համագործակց ելու ցանկության պակասը: | Դպրոցի հեղինակությ ան բարձրացում, առողջ փոխհարաբեր ությունների պահպանում: |
| **3.** | Մանկավարժ ական աշխատողնե րի մասնագիտա կան զարգացման կարիքների բացահայտու մ, բավարարու մ ու բարելավում **/կարճաժամ կետ** | 1. Բարձրացնել ինքնակրթվելո ւ և վերապատրա ստումվելու ցանկություն | 1. Կազմակերպել մանկավարժակա ն աշխատողների ինքնակրթվելուն և վերապատրաստումվ ելուն նպաստող հրազեկող, ուղղորդող հանդիպումներ | 2024-2029թթ. Յուրաք անչյուր ուստարի | Ֆինանսական միջոցներ անհրաժեշտ չեն Նյութատեխնի կական պարագաներ՝ համակարգիչն եր, ինտերնետային որակյալ կապ, ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, մեթոդական | **Քանակական-** յուրաքանչյուր ուստարվա ընթացում կազմակերպված հանդիպումներ քանակ, Վերապատրաստ ումներին մասնակցած ուսուցիչների թիվ: **Որակական-** ինքնակրթվող, մոտիվացված | Մանկավարժա կան աշխատողների պասիվություն: | Ուսուցիչների խրախուսում, պարգևատրո ւմներ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **նպատակ/** | | | | ուղեցույցներ: | ուսուցիչներ: | | |
| | | | 2. Խթանել ուսուցիչների որակավորման տարակարգին և կամավոր ատեստավորման մասնակցությունը, | 2024-2029թթ. Յուրաք անչյուր ուստարի | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, հասարակակա ն և կրթական կազմակերպու թյուններ: Նյութատեխնի կական պարագաներ՝ համակարգիչն եր, ինտերնետային որակյալ կապ, ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ: | **Քանակական-** յուրաքանչյուր տարի ատեստավորված կամ տարակարգ ստացած առնվազն երեք ուսուցիչ **Որակական-** ավելի բարձր վարձատրվող, ինքնակրթվող, մոտիվացված ուսուցիչներ: | Մանկավարժա կան աշխատողների պասիվությունն: | Ուսուցիչների խրախուսում, պարգևատրո ւմներ: Աշխատավար ձի բարձրացում, համաժաման ակյա մի քանի տեսանկյուննե րից աշխատավար ձի բարձրացման համետելիութ յուն: |
| | | | 3. Խրախուսման միջոցների կիրառում | 2024-2029 թթ. Կիսամյա կային և/ կամ տարե կան կտրված քով | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե, ՏԻՄ-ի հատկացում ներ: Միջոցներ և ռեսուրսներ՝ դպրոցի սոցիալական էջ, պատվոգրեր, շնորհակալագր եր, ներքին | **Քանակական -** Յուրաքանչյուր տարեվերջին, տոնական օրեր (ուսուցչի տոն, Կանանց միջազգային տոն և այլն) **Որակական-** մոտիվացիայի բարձրացում, մրցակցության ապահովում, աշխատանքի | Անվաբարար ֆինանսական միջոցներ: | Պլանավորում ների ճիշտ իրականա ցում: ՏԻՄ-ի հատկացում ներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կարգապահակ ան կանոններ, զեկուցագրեր | արդյունավետու թյան բարձրացում: | | |
| | | 2. Հերթական ատեստավորմ ան ենթակա ուսուցիչների կարիքի ճիշտ գնահատում | 1. Տվյալ ուսումնական տարվա ընթացքում ատեստավորվող ուսուցիչների անվանացանկի հստակեցում ու ուսուցիչների վերապատրաստմա ն վերաբերյալ ծանուցում: | 2024-2029 թթ. Պարբեր աբար, յուր. ուսումն ական տարվա ընթաց քում | Ֆինանսական միջոցներանհր աժեշտ չեն:<br><br>Ծանուցագրեր, emis համակարգ | **Քանակական** Ուսուցիչների 1/5 մաս **Որակական** Ծանուցված ուսուցիչներ | Կարծրատի պերի առկայություն, վերապատրաս տումներից խուսափող ուսուցիչներ: | Բացատրա կան, աջակցող, իրազեկող աշխատանք ներ: |
| | | | 2. Վերապատրաստ ման ենթակա ուսուցիչների մոտ դասալսումների, մշտադիտարկում ների կազմակերպում: | 2024-2029 թթ. Պարբեր աբար, յուր. ուսումն ական տարվա ընթացքո ւմ | Ֆինանկական միջոցներ անհրաժեշտ չեն: Դասալսումներ ի համար մշակված թերթիկ: | **Քանակական** Յուրաքանչյուր ուսուցչի մոտ ամսական իրականացնել առնվազն երեք դասալսում միևնույն դասարանում **Որակական** Կարիքի համապատասխ անությունը ուսուցչի ինքնագնահատմ անը | Տնօրենի տեղակալի բացակայութ յուն և դասալսում ների գնահատման ֆիզիկապես անհնարինութ յուն: | Մեթոդական առարկայա կան հանձնախմբե րի նախագահնե րի աջակցություն գործընթացին : |
| 4. | Մանկավարժ ական աշխատողնե րի մոտ զարգացնել | 1. Հեռավար կրթություն իրականացնել ու գործիքակազմ | 1. Տարբեր կրթական կազմակերպություն ների, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, | 2024-2029 թթ. շարունա կաբար | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջվում: Նյութատեխնի կական | **Քանակական-** ուսուցչական ողջ համակազմ (100 տոկոս), **Որակական-** | Ուսուցչի մասնագիտությ ան նկատմամբ հետաքրքրությա ն նվազում, | Համագործակ ցություն հեռավար կրթություն իրականացնո |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | այլընտրաքային կրթության համար անհրաժեշտ հմտություններ **/միջնաժամկետ նպատակ/** | երին տիրապետելու հմտությունների ձևավորում | Աշխարհացույցի, «Դասավանդիր Հայաստան»-ի կողմից կազմակերպվող անվճար դասընթացներին մասնակցության ապահովում | | պարագաներ և միջոցներ ՝համակարգիչներ, ինտերնետային որակյալ կապ, էլեկտրոնային բաց պաշարներ, Մարդկային ռեսուրս՝ ներդպրոցական մենթորական աջակցություն: | ուսուցիչների հեռավար կրթություն իրականացնելու գործիքակազմի իմացության և կիրառման արդյունավետության բարձրացում, անհրաժեշտության դեպքում այլընտրանքային ուսուցման գործընթացի արագ և արդյունավետ կազմակերպում, ՏՏ միջոցներից օգտվելու հմտությունների ուժեղացում: | անհրաժեշտ կադրերի պակաս, ուսուցիչների պասիվություն: | ղ մենթոր դպրոցների, «Դասավանդիր Հայաստան» ծրագրի հետ: Խրախուսման միջոցների կիրառում: |
| | | | 2. Կրթական էլեկտրոնային պաշարների ստեղծում դպրոցում դասավանդող ուսուցիչների կողմից | 2024-2029 թթ. շարունակաբար | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջվում: Նյութատեխնիկական պարագաներ և միջոցներ ՝համակարգիչներ, ինտերնետային որակյալ կապ | **Քանակական** Կրթական ռեսուրսների պաշար ստեղծված դպրոցի ուսուցիչների կողմից: **Որակական** Ուսուցիչների մասնագիտական որակների | Մանկավարժական աշխատողների պասիվություն, մոտիվացիայի պակաս: | Խրախուսման մեխանիզմների կիրառում: Պարգևատրում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | բարելավում | | |
| **5.** | Արդյունավետ ղեկավարման ու վերահսկողության կազմակերպում ու իրականացում **/կարճաժամկետ նպատակ/** | 1. Պարբերաբար վերահսկել կատարված աշխատանքները:<br><br>2. Ստուգել դրանց արդյունավետությունը, համապատասխանությունը պահանջներին: | 1. Շաբաթական դասալսումների կազմակերպում<br>2. Մեթոդմիավորումների նիստերի կազմակերպում<br>3. Մանկավարժական խորհրդի նիստերի կազմակերպում: | 2026-2027, 2027-2028 2028-2029 թթ վերանայվում է պարբերաբար, գործընթացների արդյունավետության գնահատման հիման վրա | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջվում:<br><br>Միջոցներ և ռեսուրսներ՝ համագործակցության ժամանակացույց համապատասխան տեղեկատվական համակարգեր (էլեկտրոնային մատյան, ԿՏԱԿ), ուղեցույցներ, ՀՊՉ, առարկայական թեմատիկ, օրվա պլաններ: | **Քանակական-** Շաբաթական դասալսումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ մեթոդմիավորումների նիստեր, երկու ամիսը մեկ անգամ հաճախականությամբ մանկավարժական խորհրդի նիստեր: **Որակական-** ավելի ճիշտ կազմված առարկայական թեմատիկ պլաններ, հստակեցված գնահատման չափանիշներ, բնութագրիչների ստույգ կիրառում, նոր չափորոշչային կրթության ապահովում: | Տնօրենի տեղակալի, ուսմասվարների հաստիքի բացակայություն: | Մեթոդական միավորման նախագահների, ուսուցիչների աջակցություն: |
| **6.** | 1. Ձևավորել առողջ բարոյահոգե | 1. Դրական ու առողջ միջանձնային | 1. Մանկավարժական համակազմի համար | 2024-2029 թթ. պարբեր | Ֆինանսական միջոցներ՝ արհեստակցակ | **Քանակական-** յուրաքանչյուր կիսամյակի | Կոնֆլիկտային իրավիճակների առկայություն: | Դրանց հարթմանն ուղղված |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բանական մթնոլորտ **/երկրաժամկետ նպատակ/** | հարաբերությունների ապահովում: | կազմակերպել միջոցառումներ (խաղեր, հանդիսավոր միջոցառումներ, պարգևատրումներ, խնջույքներ, քննարկումներ, ակումբներ): | աբար | ան միություն, ՏԻՄ: Նյութատեխնիկական պարագաներ և միջոցներ՝ դպրոցի տարածքը, հանգստի գոտիներ, կոլեկտիվի ներուժը: | ավարտին առնվազն մեկ անգամ, ողջ անձնակազմի համար (100 տոկոս): | | միասնական աշխատանքների իրականացում: |
| **7.** | Համագործակցային աշխատանքների արդյունավետության բարձրացում **/կարճաժամկետ կամ միջնաժամկետ նպատակ՝** կախված համագործակցության բնույթից և ծրագրի տևողությունից**/** | 1. Ընդլայնել համագործակցային կապերը, համագործակցությունների շրջանակը | 1. Ակտիվացնել համագործակցությունը մենթոր դպրոցների հետ: | 2024-2029 թթ՝ ըստ համագործակցության ժամանակացույցի | Ֆինանսական միջոցներ՝ չեն պահանջվում<br><br>Միջոցներ և ռեսուրսներ՝ համագործակցության ժամանակացույց, ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ:<br><br>Նյութատեխնիկական պարագաներ՝ համակարգիչներ, ինտերնետային որակյալ կապ | **Քանակական-** համատեղ միջոցառումների թիվը (առնվազն 25), արդի մանկավարժական տեխնոլոգիաների կիրառող մանկավարժների թիվը (կավելանա 20 տոկոսով), ինքնուրույն SS միջոցներից օգտվող ուսուցիչների քանակը (100 տոկոս) Որակական Ուսուցիչների մասնագիտական որակների | Գործընկերների ցածր մոտիվացիան, համագործակցելու ցանկության պակասը: | Դպրոցի հեղինակության բարձրացումը: Փոխադարձ աջակցությունների տրամադրում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | բարելավում, արդյունավետ դասերի վարում | | |
| | | 2. Բարձրացնել գործող համագործակցությունների արդյունավետությունը | 1. Նպաստել համայնքային ծրագրերում աշակերտների ներգրավածության բարձրացմանը /շաբաթօրյակ, ծառատունկ, պահպանվող տարածքների խնամք, միջոցառումներ, ցուցահանդես-վաճառքներ/ | 2024-2029թթ.՝ տարեկան առնվազն 6 անգամ | Ֆինանսական միջոցներ՝ չեն պահանջվում:<br><br>Նյութատեխնիկական պարագաներ՝ տնկիներ, տարածքի մաքրման, ծառատունկի գործիքներ և պարագաներ, իրազեկող ցուցանակներ: | **Քանակական** պլանավորված միջոցառումների քանակը (100 տոկոս), Տնկված ծառերի թիվը (տարեկան առնվազն 10 ծառ), մաքրված տարածքների մակերեսը (դպրոցի տարածք, դպրոցամերձ տարածք ) **Որակական** իրականացված միջոցառումների ակտուալ լինելը, միջոցառմների համապատասխանությունը նպատակին, ներգրավվածությունը | Սովորողների կողմից համայքային աշխատանքներին կամավորության մեջ մասնակցելու նախաձեռնողականության պակաս: | Խրախուսական միջոցառումների կազմակերպում՝ պատվոգրեր, շնորհակալագրեր, փոքրիկ մրցանակներ: |
| | | | 2. Երեխաների մոտ մշակութային և գեղագիտական դաստիարակության զարգացման նպատակով ակտիվացնել | 2024-2029թթ. պարբերաբար, յուրաքանչյուր տարի | Ֆինանսական միջոցներ՝ չեն պահանջվում<br><br>Նյութատեխնիկական պարագաներ՝ | **Քանակական-** սպառված աբոնեմենտների քանակը, այցելությունների թիվը: **Որակական-** | Համապատասխան թատրոնի կամ թանգարանի այցելության համար սահմանափակ | Հետևողական աշխատանք, վաղաժամ ամրագրում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կրթամշակութային կազմակերպություններ հետ համագործակցությունները: | առնվազն 5 այցելություն | տրանսպորտային միջոցներ, աբոնեմենտներ, դաստիարակչական աշխատանքների պլաններ | դասարանների և այցելության վայրի ընտրության հիմնավորված լինելը | տեղեր: | |
| **8.** | Կառավարման ժողովրդավարության սկզբունքների ապահովում **/երկարաժամկետ նպատակ/** | 1. Սովորողների և աշխատողների իրավագիտակցության բարձրացում: | 1. Սահմանել և հստակեցնել աշակերտների և աշխատողների իրավունքներին և պարտականություններին ներկայացվող պահանջները և իրազեկել դրանց մասին (Ներքին կարգապահական, բարեվարքության կանոններ): | 2024-2029 թթ. պարբերաբար՝ ըստ ոլորտի անհրաժեշտության | Ֆինանսական միջոցներ՝ չի պահանջում: Նյութատեխնիկական պարագաներ՝ անանուն հարցարաններ, կարծիքի արկղեր | **Քանակական-** բոլոր աշակերտներ (100 տոկոս) կարծիքների, դիրքորոշումների ազատ արտահայտման միջոցների կիրառելիության տոկոսի մեծացում: **Որակական -** աշակերտների կողմից նախաձեռնողականության, դպրոցի գործունեության և առնչվող առաջարկներ և լուծումներ: | Արտաքին միջավայրի, բարքերի անմիջական ազդեցություն: | Պարբերաբար իրազեկման զրույցներ, միջոցառումներ: |
| **9.** | Անվտանգ դպրոցական միջավայրի ապահովում **/երկրաժամկ** | 1. Անվտանգ շենքային պայմանների ապահովում: | 1. Լուսավորության, աղմուկի և ջերմաստիճանի նորմատիվային | 2024-2029 թթ. Անընդհատ գործընթ | Ֆինանսական միջոցներ՝ պետական բյուջե | **Քանակական-** Նորմատիվային պահանջների անհամապատասխանության | Արտաքին միջավայրի, կլիմանայական պայմանների, բարքերի | Պարբերաբար իրազեկման և տարիանման զրույցներ, |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ետ նպատակ/ | | պահանջների ապահովում<br>2. Ֆիզիկական ապնվտանգության ապահովում<br>3. Սանիտարահիգենիկ (մաքրության) պահանջների ապահովում<br>4. Հակահրշեջային կրակմարիչների տեղադրում:<br>5. Շենքից տարհանման գծագրերի փակցնում՝ համապատասխան վայրերում:<br>6. ԱԻՆ-ի հետ համագործակցությամբ տարհանման (երկրաշարժ, հրդեհ, արտակարգ իրավիճակներ)միջոցառումների իրականացում | աց, նախապատրաստական աշխատանքներ՝ յուրաքանչյուր օգոստոս ամսին<br><br>Միջոցառումների իրականացու՝ ըստ պլանի | Նյութատեխնիկական պարագաներ՝ կրակմարիչներ, բահ, ավազ և այլն, մաքրության և հիգիենայի պարագաներ, Ռեսուրսներ՝ տարհանման պլան, ներքին կարգապահական կանոններ, տարհանման միջոցառումների տարեկան պլան, կիսամյակային հերթապահությունների գրաֆիկ, պատասխանատուների սահմանում | նվազեցում, շեղման ցուցանիշների առկայությունն ոչ ավել քան 15%<br><br>**Որակական** - ԱԻՆի կողմից հաստատված տարհանման սխեմաների տեսանելիության ապահովումը, կրակմարիչների առկայությունը, օգտագործման ժամկետների, ինչպես նաև տեղակայման չափանիշների պահպանումը (շեղում 0%), | անմիջական ազդեցություն, ֆինանսական միջոցների սակավություն: | միջոցառումներ: Համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածություն: |
